

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

▣B **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 767/2009 (ԵՀ) կանոնակարգ «Կերի շուկայահանման եւ օգտագործման մասին»**
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգը
փոփոխող, եւ Խորհրդի 79/373/ԵՏՀ հրահանգը, Հանձնաժողովի 80/511/ԵՏՀ
հրահանգը, Խորհրդի 82/471/ԵՏՀ, 83/228/ԵՏՀ, 93/74/ԵՏՀ, 93/113/ԵՀ եւ
96/25/ԵՀ հրահանգներն ու Հանձնաժողովի 2004/217/ԵՀ որոշումը չեղյալ
համարող:

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 229, 1.09.2009թ., էջ 1)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

Թիվ էջ ամսաթիվ

▣M1	Հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ 568/2010 կանոնակարգ (ԵՄ)	L 163	30	30.06 2010թ.
▣M2	Հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 939/2010 կանոնակարգ (ԵՄ)	L 277	4	21.10 2010թ.

▼B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 767/2009 (ԵՀ) կանոնակարգ «Կերի շուկայահանման եւ օգտագործման մասին»

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգը փոփոխող,
եւ Խորհրդի 79/373/ԵՏՀ հրահանգը, Հանձնաժողովի 80/511/ԵՏՀ հրահանգը,
Խորհրդի 82/471/ԵՏՀ, 83/228/ԵՏՀ, 93/74/ԵՏՀ, 93/113/ԵՀ եւ 96/25/ԵՀ
հրահանգներն ու Հանձնաժողովի 2004/217/ԵՀ որոշումը չեղյալ համարող:**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը եւ,
մասնավորապես, վերջինիս 37-րդ ու 152 (4) (բ) հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովի առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը(1),

խորհրդակցելով Տարածաշրջանների կոմիտեի հետ,

գործելով Համաձայնագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (2),

Քանի որ

- 1) Մարդու եւ կենդանիների առողջության պաշտպանության բարձր մակարդակի ապահովումը «Սննդամթերքի մասին» օրենսդրության հիմնական նպատակներից մեկն է, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հունվարի 28-ի թիվ 178/2002 (ԵՀ) կանոնակարգում՝ «Սննդամթերքի մասին օրենսդրության ընդհանուր սկզբունքները եւ պահանջները սահմանելու մասին», որով ստեղծվում է Սննդամթերքի անվտանգության հարցերով եվրոպական մարմին եւ որով սահմանվում են սննդամթերքի անվտանգությանը վերաբերող ընթացակարգերը (3)։ Այդ կանոնակարգով նաեւ սահմանվում է «դաշտից դեպի սեղան» մոտեցումը, որը մատնանշում է կերը որպես սննդի շղթայի սկզբում գտնվող զգայուն փուլ։ Հանրային առողջության պաշտպանության առավել բարձր մակարդակի ապահովումը սույն Կանոնակարգի հիմնական նպատակներից մեկն է։

- 2) Կերի արտադրությունը եվրոպական գյուղատնտեսական արտադրանքի առումով

կարելի է նպատակ է՝ հաշվի առնելով, որ անասնակերի արտադրության համար օգտագործվող նյութերի մեծ մասը Համաձայնագրի I հավելվածում թվարկված գյուղատնտեսական արտադրանք են: Ավելին, կերը շատ էական նշանակություն ունի Համայնքի ավելի քան հինգ միլիոն անասնաբույծների համար, քանի որ այն ամենամեծ ծախսն է կազմում:

3) Կերը կարող է ունենալ կերային նյութի, համակցված կերի, սննդային հավելումների, պրեմիքսների կամ դեղամիջոց պարունակող կերային նյութերի տեսք: Սննդային հավելումների շուկայահանման կանոնները ներկայացված են Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1831/2003 «Կենդանիների սննդի համար օգտագործվելիք հավելումների մասին» կանոնակարգում (ԵՀ) (4) իսկ դեղամիջոց պարունակող կերային նյութերի վերաբերյալ կանոնները ներկայացված են Համայնքում դեղամիջոց պարունակող կերի պատրաստումը, շուկայահանումը և օգտագործումը կառավարող պայմանները սահմանող՝ Խորհրդի 1990 թվականի մարտի 26-ի 90/167/ԵՏՀ հրահանգում: (5).

4) Կերային նյութերի և համակցված կերի՝ ընտանի կենդանիների կերը ներառող շրջանառության և օգտագործման մասին գոյություն ունեցող օրենսդրությունը, այն է՝ Խորհրդի 1979 թվականի ապրիլի 2-ի 79/373/ԵՏՀ հրահանգը՝ համակցված կերերի շրջանառության մասին (6), Խորհրդի 1993 թվականի սեպտեմբերի 13-ի 93/74/ԵՏՀ հրահանգը՝ որոշակի սննդային նպատակների համար նախատեսվող կերերի մասին (7) (դիետիկ անասնակեր), Խորհրդի 1996 թվականի ապրիլի 29-ի հրահանգ՝ կերային նյութերի շրջանառության և օգտագործման մասին (8) և Խորհրդի 1982 թվականի հունիսի 30-ի հրահանգ՝ կենդանիների սննդում օգտագործվող որոշակի արտադրանքի մասին (9) (բիո-պրոտեիններ), պետք է նորացվի և փոխարինվի մեկ միասնական կանոնակարգով: Պարզության նպատակներից ելնելով՝ Խորհրդի 1983 թվականի ապրիլի 18-ի 83/228/ԵՏՀ հրահանգը կենդանիների սննդում օգտագործվող որոշակի արտադրանքի գնահատման համար ուղեցույցներ սահմանող (10) և Հանձնաժողովի 1980 թվականի մայիսի 2-ի 80/511/ԵՏՀ՝ որոշակի դեպքերում չկնքված փաթեթներում կամ տարաներում համակցված կերային նյութերի շուկայահանումը թույլ տվող

հրահանգ (11) պետք է ուժը կորցրած ճանաչվեն:

5) Սույն Կանոնակարգով 79/373/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելու հետեւանքով, Խորհրդի 1993 թվականի դեկտեմբերի 14-ի 93/113/ԵՀ հրահանգը՝ «Կենդանիների սննդում ֆերմենտների, միկրո-օրգանիզմների եւ նրանց պատրաստուկների օգտագործման ու շուկայահանման մասին» (12) նույնպես պետք է ուժը կորցրած ճանաչվի: Նաեւ, հաշվի առնելով 79/373/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելը, եւ որ սույն Կանոնակարգը ներառում է հավելումներ պարունակող կերի պիտակավորման կանոններ, Խորհրդի 1970 թվականի նոյեմբերի 23-ի 70/524/ԵՏՀ հրահանգը՝ կերային նյութերում հավելումների մասին (13), որն ուժի մեջ էր մնացել թիվ 1831/2003 կանոնակարգի միջոցով, 70/524/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելուց հետո, պետք է ուժը կորցրած ճանաչվի:

6) Ի տարբերություն թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ)՝ կերի սահմանումը չի ներառում ջուրը: Ավելին, հաշվի առնելով, որ ջուրը չի շուկայահանվում կենդանիների սննդի նպատակների համար, սույն Կանոնակարգի մեջ չպետք է ներառվեն կենդանիների սննդում օգտագործվող ջրի վերաբերյալ պայմաններ: Այնուամենայնիվ, այն վերաբերում է ջրում տրվող կերին: Անասնակերի ոլորտի ձեռնարկություններում ջրի օգտագործումը կարգավորվում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի հունվարի 12-ի թիվ 183/2005 կանոնակարգով՝ կերի հիգիենայի նկատմամբ պահանջներ սահմանող (14), որը պարտադրում է, որ պետք է օգտագործվի մաքուր ջուր՝ ցանկացած դեպքում, երբ անհրաժեշտ է՝ կանխարգելելու համար աղտոտումը, որը կարող է հաստատվել որպես վտանգավոր, եւ որ անասնակերի արտադրության մեջ օգտագործվող ջուրը պետք է համապատասխան որակ ունենա:

7) Հաշվի առնելով կերի եւ սննդի շղթայի աղտոտման վտանգը, պատշաճ է, որ սույն Կանոնակարգը վերաբերի թե սննդամթերքի համար օգտագործվող կենդանիներին եւ թե սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիներին՝ ներառյալ վայրի կենդանիները:

8) Անասնակերի ոլորտի տնտեսավարողների պարտականությունները՝ սահմանված թիվ 178/2002 (ԵՀ) եւ թիվ 183/2005 (ԵՀ) կանոնակարգերում, պետք է, համապատասխան փոփոխություններով, վերաբերեն սննդամթերքի համար օգտագործվող եւ սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների առումով:

9) Սույն Կանոնակարգին համապատասխանությունն ապահովելու համար անդամ պետությունները պետք է իրականացնեն պաշտոնական հսկողություն՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29–ի թիվ 882/2004 կերի ու սննդամթերքի մասին օրենսդրության, «Կենդանիների առողջության եւ բարեկեցության մասին կանոնների հետ համապատասխանության ստուգումն ապահովելու նպատակով իրականացվող պետական հսկողության մասին» կանոնակարգին (ԵՀ) համապատասխան (15). Այդ հսկողությունը պետք է ներառի ոչ միայն պարտադիր, այլեւ կամավոր պիտակավորման մանրամասները: Բաղադրյալ տվյալների հսկողությունը թույլ տալու համար պետք է սահմանվեն պիտակավորված արժեքների թույլատրելի շեղումներ:

10) Կերի հետ կապված վտանգները կառավարելու համար սույն Կանոնակարգի հավելվածում պետք է ընդգրկվի կենդանիների սնուցման նպատակներով շուկայահանման համար արգելված նյութերի ցանկը, ինչպես ներկայումս նախատեսված է Հանձնաժողովի 2004/217/ԵՀ որոշման համաձայն (16), կենդանիների սնուցման նպատակներով սահմանափակ շուկայահանմամբ նյութերի ցանկի հետ մեկտեղ: Այդպիսի հավելվածի գոյությունը, այնուամենայնիվ, չպետք է մեկնաբանվի այնպես, որ չթվարկված բոլոր արտադրատեսակները կարող են, որպես այդպիսին, անվտանգ համարվել:

11) Կերային նյութերի, սննդային հավելումների եւ այլ արտադրանքի, ինչպես նաեւ անասնաբուժական դեղամիջոցների միջեւ տարբերակումը հետեւանքներ ունի այդպիսի արտադրանքի շուկայահանման պայմանների վրա: Կերային նյութերը հիմնականում օգտագործվում են կենդանիների, օրինակ՝ էներգիայի, սննդարար նյութերի,

հանքանյութերի կամ դիետիկ մանրաթելի պահանջը բավարարելու համար: Նրանք սովորաբար որոշակի քիմիական բաղադրություն չունեն՝ բացառությամբ սննդի հիմնական բաղադրամասերի: Կերային նյութերի օբյեկտիվ օգտագործումը պետք է բացառի փորձաքննությամբ հիմնավորվող եւ բացառապես սննդային հավելումներին կամ անասնաբուժական դեղորայքին պատկանող ազդեցությունները : Հետեւաբար, անհրաժեշտ է արտադրանքի այս տեսակները տարբերակելու համար ոչ պարտադիր ուղեցույցներ պատրաստել: Պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում, Հանձնաժողովը պետք է լիազորություն ունենա պարզելու՝ արդյոք արտադրանքը կեր է՝ սույն Կանոնակարգի նպատակներից ելնելով:

12) 79/373/ԵՏՀ հրահանգում պարունակվող լրացակերերի սահմանումը կիրառման հետ կապված խնդիրներ է առաջացրել տարբեր անդամ պետություններում: Նպատակահարմար է պարզաբանել տարբերությունը լրացա կերերի եւ պրեմիքսների միջեւ թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) կիրառման նպատակներով,

13) Օրենսդրության միասնական կիրառումը թույլ տալու համար կերային նյութերը եւ լրացակերը չպետք է պարունակեն որոշակի սահմանից ավելի հավելումներ: Այնուամենայնիվ բարձր խտությամբ կերը, ինչպիսիք հանքանյութեր պարունակող քարաղերն են, կարող են օգտագործվել անմիջական կերակրման համար, եթե դրանց բաղադրությունը համապատասխանում է անհրաժեշտ նպատակային օգտագործման առումով սնուցման կոնկրետ նպատակին: Այդպիսի կերի օգտագործումը կարգավորող պայմանները պետք է նշված լինեն պիտակի վրա՝ ապահովելու համար օրական կերաբաժնում սննդային հավելումների բաղադրության վերաբերյալ կանոնների պահպանումը:

14) 1831/2003/ԵՏՀ հրահանգի նպատակը Համայնքում որպես սպիտակուցի ուղղակի եւ անուղղակի աղբյուր օգտագործվող կերի մատակարարումը բարելավելն է: Այդ Հրահանգով պահանջվում է վաճառքին նախորդող լիազորման ընթացակարգ՝ բոլոր հնարավոր բիոպրոտեինների համար: Այնուամենայնիվ, առ այժմ տրամադրվել են միայն շատ քիչ թվով լիազորագրեր եւ սպիտակուցներով հարուստ կերի պակասը

դեռեւս ակնհայտ է: Այսպիսով, հաստատվել է, որ վաճառքին նախորդող լիազորման վերաբերյալ ընդհանուր պահանջը արգելող բնույթ է կրում եւ հնարավոր էր անդրադառնալ անվտանգության հետ կապված ռիսկերին՝ արգելելով ռիսկային արտադրանքը՝ հիմնվելով շուկայի վերահսկողության վրա: Այն դեպքում, երբ բիոպրոթեինի ռիսկի գնահատման արդյունքը բացասական է, շրջանառումը կամ օգտագործումը պետք է արգելվի: Այդպիսով, բիոպրոթեինների վաճառքին նախորդող լիազորման ընդհանուր ընթացակարգը պետք է վերացվի, այն պատճառով, որ այդպիսի արտադրանքի համար անվտանգության համակարգը պետք է լինի նույնը, որն առկա է բոլոր այլ կերային նյութերի համար: Ազդեցություն չպետք է ներգործվի որոշակի բիոպրոթեինների նկատմամբ գոյություն ունեցող սահմանափակումների կամ դրանց արգելման վրա:

15) Ապացուցվել է, որ Հանձնաժողովի 2008 թվականի մարտի 5-ի 2008/38/ԵՀ՝ կենդանիների կերանյութերի որոշակի սննդային նպատակներով նպատակային օգտագործման դեպքերի ցուցակը սահմանող հրահանգով իրականացվող՝ 93/74/ԵՏՀ հրահանգի դրույթները (17) լավ են գործում: Այդպիսով, պետք է պահպանվի սահմանված նպատակային օգտագործման դեպքերի ցուցակ, եւ սույն Կանոնակարգով պետք է նախատեսվի դրա թարմացումը: Մասնավորապես, Սննդամթերքի անվտանգության եվրոպական մարմնի հետ պետք է խորհրդակցել այդպիսի անասնակերի արդյունավետության եւ անվտանգության հարցերով, այն դեպքում, երբ հիմնվելով առկա գիտական եւ տեխնոլոգիական տեղեկությունների վրա, պատճառներ կան՝ կարծելու համար, որ համապատասխան կերի օգտագործումը հնարավոր է չհամապատասխանի նախատեսված կոնկրետ սնուցման նպատակին կամ կարող է բացասաբար ազդել կենդանիների առողջության, մարդու առողջության, շրջակա միջավայրի կամ կենդանիների բարեկեցության վրա:

16) Գիտական հիմնավորումը պետք է լինի հաշվի առնվող հիմնական գործոնը՝ անասնակերի առումով դիմումներ ներկայացնելու համար, եւ այդպիսի դիմումներ ներկայացնող անասնակերի ոլորտի տնտեսավարողները պետք է կարողանան հիմնավորել դրանք: Դիմումը կարող է գիտականորեն հիմնավորված լինել՝ հաշվի առնելով առկա գիտական տվյալների ամբողջականությունը եւ համեմատելով առկա

ապացույցները:

17) Պիտակավորումը ծառայում է կատարման, հետագծելիության եւ վերահսկողության նպատակներին: Բացի դրանից՝ գնորդներին պետք է պիտակավորմամբ տրամադրվի անհրաժեշտ տեղեկատվություն՝ թույլ տալու նրանց կատարել իրենց կարիքների առումով օպտիմալ ընտրությունը, եւ այն պետք է լինի հետետողական, համապարփակ, թափանցիկ եւ հասկանալի: Քանի որ գնորդները, հատկապես՝ անասնաբույծները, ընտրություն են կատարում ոչ միայն վաճառքի պահին, երբ նրանք կարող են զննել կերի փաթեթավորումը, պետք է կիրառվեն պիտակավորման վերաբերյալ տրամադրվող տեղեկությունների վերաբերյալ պահանջները՝ ոչ միայն արտադրանքի վրա առկա պիտակների նկատմամբ, այլ նաեւ վաճառողի եւ գնորդի միջեւ հաղորդակցման այլ տեսակների նկատմամբ: Ավելին, այդ սկզբունքները պետք է կիրառվեն նաեւ կերը ներկայացնելու եւ գովազդի նկատմամբ:

18) Պիտակի վրա նշվող պարտադիր եւ ոչ պարտադիր տեղեկությունները: Պարտադիր տեղեկությունները պետք է համադրեն պիտակավորման վերաբերյալ ընդհանուր պահանջները եւ կերային նյութերի կամ համակցված կերի վերաբերյալ հատուկ պահանջներն ու լրացուցիչ պահանջներ՝ դիետիկ կերի, աղտոտված նյութի եւ ընտանի կենդանիների կերի վերաբերյալ:

19) Կերային նյութերի արտադրական գործընթացից եւ մշակման լրացուցիչ միջոցների արդյունքում առաջացող քիմիական խառնուրդների հետ կապված ներկա իրավիճակը բավարար չէ: Կերի անվտանգության եւ, հետեւաբար՝ հանրային առողջության բարձր մակարդակ ապահովելու եւ թափանցիկությունը բարելավելու համար պետք է ընդունվեն այդպիսի քիմիական խառնուրդների ընդունելի մակարդակներ սահմանող դրույթներ՝ համաձայն թիվ 183/2005 (ԵՀ) կանոնակարգում նշված լավագույն փորձի:

20) Լավ է աշխատում այն սկզբունքը, որ պետք է պիտակավորվեն միայն որոշակի սննդային հավելումներն այն դեպքում, երբ դրանք օգտագործվում են կերային նյութերում եւ համակցված կերում: Այնուամենայնիվ, թիվ 1831/2003 (ԵՀ)

կանոնակարգից բխող դասակարգումը պետք է թարմացվի եւ արդիականացվի, նաեւ հաշվի առնելով այն փաստը, որ ընտանի կենդանիների տերերը հնարավոր է շփոթվեն որոշ հավելումների պիտակավորումից:

21) Որպես խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիայի (ԽԵԿԱԷ) եւ դիոքսինային ճգնաժամի հետեւանք՝ համակցված կերում ներառված բոլոր կերային նյութերի՝ ըստ կշռի տոկոսը նշելու պարտավորությունը ներկայացվել է 2002 թվականին՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հունվարի 28–ի 2002/2/ԵՀ՝ Խորհրդի 79/373/ԵՏՀ համակցված կերային նյութերի շրջանառության մասին հրահանգը փոփոխող հրահանգով (18), Եվրոպական պառլամենտի նախաձեռնությամբ: Ավելին, սննդամթերքի եւ կերի անվտանգության մակարդակը զգալիորեն բարելավվել է թիվ 178/2002 (ԵՀ) եւ թիվ 183/2005 (ԵՀ) կանոնակարգերի եւ դրանց կիրարկման միջոցների արդյունքում, հատկապես անասնակերի եւ սննդամթերքի ոլորտում ձեռնարկատերերի վրա դրված պարտականության վրա կենտրոնացման, բարելավված հետազոտելիության համակարգի, անասնակերի ոլորտում ձեռնարկությունների համար ռիսկերի վերլուծության եւ կրիտիկական կետերի հսկման սկզբունքի (ՌՎԿԿՀՍ) ներդրման եւ անասնակերի ոլորտում ձեռնարկություններում հիգիենիկ պատշաճ գործելակերպի վերաբերյալ ուղեցույցների ստեղծման հետեւանքով: Հաշվի առնելով այս դրական ձեռքբերումները, որոնք արտացոլվում են Սննդամթերքի եւ կերի արագ ահազանգի համակարգի (ՍԱՔԱԱՀ) ծանուցումներում, պիտակի վրա համակցված կերում պարունակվող բոլոր կերային նյութերի համար ըստ կշռի տոկոսը նշելու պարտավորությունն այլեւս անհրաժեշտ չէ անասնակերի անվտանգության, եւ, հետեւաբար, հանրային առողջության պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար: Այնուամենայնիվ, ստույգ տոկոսները կարող են նշվել՝ գնորդներին համապատասխան տեղեկատվություն կամավոր տրամադրելու նպատակով: Ավելին, հաշվի առնելով, որ իրավասու մարմիններին հասանելի են համակցված կերում պարունակվող բոլոր կերային նյութերի՝ ըստ քաշի ճշգրիտ տոկոսների վերաբերյալ տեղեկությունները, նրանք պետք է կարողանան, մարդկային կամ կենդանիների առողջության կամ շրջակա միջավայրի հետ կապված որեւէ արտակարգ իրավիճակի հիման վրա, եւ համաձայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Մտավոր սեփականության իրավունքների կիրառման մասին» 2004 թվականի ապրիլի 29–ի 2004/48/ԵՀ հրահանգի (19), գնորդներին

լրացուցիչ տեղեկություններ տրամադրել:

22) Գնորդի համար պատշաճ տեղեկություններ ապահովելու եւ թյուրիմացությունից խուսափելու համար, ըստ կշռի ճշգրիտ տոկոսը, այնուամենայնիվ, պետք է պահանջվի այն դեպքերում, երբ համապատասխան կերային նյութը շեշտվում է համակցված անասնակերի պիտակում:

23) Համակցված կերում պարունակվող կերային նյութերի մասին նշումը ըստ կշռի նվազող կարգով արդեն իսկ կարելի է տեղեկություն է տրամադրում բաղադրության վերաբերյալ տվյալների մասին: Որոշակի տարածքներում, որտեղ արտադրողը պարտավոր չէ պիտակում ներկայացնել մանրամասները, գնորդը պետք է կարողանա լրացուցիչ տեղեկություններ պահանջել: Այդպիսի դեպքերում պետք է պահպանվի հայտարարված արժեքի $+(-)15\%$ մարժա:

24) Պետք է պաշտպանվեն արտադրողների մտավոր սեփականության իրավունքները: Այդպիսի մտավոր սեփականության իրավունքների կիրառման նպատակով պետք է կիրառվի 2004/48/ԵՀ հրահանգը: Նաեւ պետք է ընդունել, որ համակցված անասնակերի քանակական բաղադրությունը, ի տարբերություն դրանում պարունակվող կերային նյութերի անվանումների, կարող է, որոշակի պայմաններում, համարվել պաշտպանության ենթակա գաղտնի տեղեկատվություն:

25) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի մայիսի 7-ի 2002/32/ԵՀ հրահանգը՝ «Կենդանիների կերում ոչ ցանկալի նյութերի մասին» (20) չի կիրառվում չափազանց շատ ոչ ցանկալի նյութեր պարունակող անասնակերի պիտակավորման նկատմամբ: Հետեւաբար, պետք է սահմանվեն դրույթներ՝ ապահովելու համար այդ հրահանգի 5-րդ հոդվածում նախատեսված՝ լուծման վերաբերյալ արգելքը, մինչեւ այդպիսի աղտոտված նյութերը թունազերծվեն թունազերծող հաստատության կողմից, որը հաստատված է թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) 10(2) կամ (3) հոդվածին համապատասխան, կամ մինչեւ դրանք մաքրվեն:

26) Պիտակավորման վերաբերյալ ընդհանուր պահանջներից շեղումները պետք է նախատեսվեն, քանի դեռ այդպիսի պահանջների կիրառումն անհրաժեշտ չէ՝ մարդկային կամ կենդանիների կամ սպառողների շահերի պաշտպանության համար եւ անհարկի բեռ կառաջացնի պիտակավորման համար պատասխանատու արտադրողի կամ կերի ոլորտի տնտեսավարողների համար: Փորձի հիման վրա այդպիսի շեղումներ պետք է նախատեսվեն, հատկապես մեկ ֆերմերի կողմից մյուսին՝ նրա ֆերմայում օգտագործման համար մատակարարվող կերի, փոքր քանակների, երեքից ավելի կերային նյութեր պարունակող համակցված կերի եւ բույսերի ամբողջական հատիկների, սերմերի ու պտուղների խառնուրդների առումով:

27) Որպես ընդհանուր կանոն՝ համակցված կերը պետք է շուկայահանվի հերմետիկորեն փակ տարայում, սակայն պետք է նախատեսվեն համապատասխան շեղումներ այն դեպքում, երբ այդ պայմանի կիրառումն անհրաժեշտ չէ՝ մարդկային կամ կենդանիների առողջությունը կամ սպառողների շահերը պաշտպանելու համար կամ չափից մեծ բեռ կառաջացնելու անասնակերի ոլորտի տնտեսավարողների համար:

28) 96/25/ԵՀ հրահանգի հավելվածի Բ մասը եւ 82/471/ԵՏՀ հրահանգի հավելվածի 2-4-րդ սյունակներում առկա են որոշակի կերային նյութերի համար նշանների, նկարագրությունների եւ պիտակավորման վերաբերյալ դրույթների ցանկեր: Այդ ցանկերի օգնությամբ դյուրացվում է արտադրողի եւ գնորդի միջեւ արտադրանքի հատկանիշների վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը: Շահագրգիռ կողմերին՝ կերի հիգիենայի ոլորտում Համայնքի ուղեցույցների միջոցով ոչ պարտադիր չափորոշիչներ սահմանելը քաջալերելու փորձն ամբողջությամբ դրական էր: Ավելի մանրամասն ցանկեր կարելի էր ավելի ճկուն կերպով կազմել, եւ դրանք հնարավոր կլինեին ավելի լավ հարմարեցնել օգտագործողի տեղեկատվական կարիքներին, եթե դրանց պատրաստումը լինեին ոչ թե օրենսդրական մարմնի, այլ շահագրգիռ կողմերի նախաձեռնությունը: Շահագրգիռ կողմերը կարող են որոշում կայացնել իրենց կողմից ձեռնարկվող ջանքերի մասին՝ կախված կերային նյութերի ցուցակի կարելիությունից: Հետեւաբար, ցանկալի է ստեղծել անասնակերի ոլորտի տնտեսավարողների կողմից կամավոր օգտագործվող կերային նյութերի ոչ սպառիչ

կատալոգ՝ բացառությամբ կերային նյութի անվանումների օգտագործման առումով:

29) 96/25/ԵՀ հրահանգի հավելվածի Բ մասում եւ82/471/ԵՏՀ հրահանգի հավելվածի 2-4-րդ սյունակներում պարունակվող կերային նյութերի ներկա ցանկերը պետք է կերային նյութերի Համայնքի կատալոգի սկզբնական տարբերակը լինեն: Այս սկզբնական տարբերակը հետագայում պետք է համալրվի շահագրգիռ կողմերի նախաձեռնությամբ, համաձայն նրանց շահերի՝ ներառյալ երեւան եկող կերային նյութերի ավելացումը:

30) Թափանցիկության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է, որ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները ծանուցվեն այն կերային նյութի մասին, որը ներկայացված չէ կատալոգում, սյդպիսի կերային նյութի առաջին անգամ շուկայահանման պես:

31) Ժամանակակից պիտակավորումը օժանդակում է մրցունակ շուկայական միջավայրին, որում դինամիկ, արդյունավետ, նորարար ձեռնարկատերերը կարող են ամբողջությամբ կիրառել պիտակավորումը՝ նրանց արտադրանքը վաճառելու համար: Հաշվի առնելով անասնապահական կերի շուկայահանման ոլորտում ձեռնարկությունների միջեւ կապը եւ ընտանի կենդանիների կերի արտադրողի եւ գնորդի միջեւ կապը, այդ երկու ոլորտների համար Պատշաճ պիտակավորման կանոնները կարող են լինել ժամանակակից պիտակավորման նպատակներին հասնելու օգտակար միջոցներ: Կանոններում պետք է սահմանվեն դրույթներ, որոնք գնորդին թույլ կտան տեղեկացված ընտրություն կատարել: Նրանք նաեւ պետք է պիտակավորման համար պատասխանատու անձին կարելու ուղղություններ տրամադրեն պիտակավորման տարբեր տարրերի մասին: Դրանք կարող է օգտակար լինեն կամավոր պիտակավորման շրջանակի մեկնաբանության կամ պարտադիր պիտակավորումը ներկայացնելու համար: Կանոնները պետք է կամավոր կիրառվեն՝ բացառությամբ այն դեպքի, երբ Կանոնների կիրառումը նշված է պիտակի վրա:

32) Համապատասխան բոլոր կողմերի ներգրավումը Կատալոգի եւ Պատշաճ պիտակավորման կանոնների որակյալ եւ համապատասխան լինելու կարելու տարր է: Օգտագործողների՝ պատշաճ տեղեկատվություն ստանալու իրավունքներն

ամրապնդելու համար պետք է հաշվի առնել նրանց շահերը: Սա հնարավոր է ապահովել Կատալոգի եւ Կանոնների Հանձնաժողովի կողմից հաստատման միջոցով՝ պայմանով, որ դրա բովանդակությունը կիրառելի է եւ որ դրանք հարմար են՝ սույն Կանոնակարգի նպատակներին հասնելու համար:

33) Անդամ պետությունները պետք է սահմանեն պատժամիջոցներ՝ սույն Կանոնակարգի դրույթների խախտման համար եւ պետք է ձեռնարկեն դրանց իրականացումն ապահովող բոլոր անհրաժեշտ միջոցները: Այդպիսի պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համամասնական եւ տարհամոզիչ:

34) Անհրաժեշտ՝ անցումային շրջան, հատկապես այն անասնակերի առումով, որը համապատասխանում է սնուցման կոնկրետ նպատակի եւ արտադրական գործընթացի ու մշակման լրացուցիչ միջոցների արդյունքում առաջացող քիմիական խառնուրդների ընդունելի մակարդակի առումով: Պետք է թույլատրվի գոյություն ունեցող պաշարների շուկայահանումը՝ մինչեւ պաշարների սպառումը: Ավելին, կարող է անհրաժեշտ լինել հատկորոշել այնպիսի պայմաններ, որոնց ներքո կերը կարող է պիտակավորվել՝ համաձայն սույն Կանոնակարգի՝ մինչ դրա կիրառման ամսաթիվը:

35) Քանի որ սույն Կանոնակարգի նպատակը, այն է՝ կերի շուկայահանման եւ օգտագործման պայմանների ներդաշնակեցումը՝ կերի անվտանգության եւ, հետեւաբար, հանրային առողջության պաշտպանության բարձր մակարդակի ապահովումը, ինչպես նաեւ օգտագործողների եւ սպառողների համար համապատասխան տեղեկությունների տրամադրումը եւ ներքին շուկայի արդյունավետ գործունեության ամրապնդումը չի կարող բավականաչափ իրականացվել անդամ պետությունների կողմից եւ, հետեւաբար, այն հնարավոր է ավելի լավ իրականացնել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է ընդունել միջոցներ՝ համաձայն Համաձայնագրի 5-րդ հոդվածում ներկայացված սուբսիդիարության սկզբունքի: Համաձայն համամասնության սկզբունքի, ինչպես ներկայացված է հոդվածում, սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ այդ նպատակին հասնելու համար:

36) Սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Խորհրդի՝ Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման համար ընթացակարգ սահմանող՝ 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշման համաձայն: (21).

37) Մասնավորապես, Հանձնաժողովը պետք է լիազորված լինի փոփոխելու անասնակերում սահմանափակ օգտագործմամբ կամ արգելված նյութերի ցանկը, հաստատել որոշակի սննդային նպատակների համար նախատեսված անասնակերը, պատրաստել սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների՝ բացառությամբ մորթատու կենդանիների համար կերերի պիտակավորման կատեգորիաների ցուցակ, քիմիական խառնուրդների առավելագույն պարունակությունը կամ բուսաբանական մաքրության աստիճանները կամ խոնավությունը կամ պարտադիր հայտարարումը փոխարինող մանրամասն տեղեկություններ սահմանող՝ Կատալոգի փոփոխություններ ընդունել՝ հարմարեցնելու համար Հավելվածները՝ հաշվի առնելով զարգացումը գիտության եւ տեխնոլոգիայի ոլորտում եւ անցումային միջոցներ ընդունելու համար: Քանի որ այդ միջոցներն ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու, այդ թվում՝ այն նոր, ոչ էական տարրերով լրացնելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

38) Արդյունավետության հիմքերից ելնելով՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի սովորական ժամկետները պետք է կրճատվեն՝ նպատակային օգտագործման համար նախատեսված դեպքերը սահմանող ցուցակի թարմացումներ ընդունելու համար: Այն դեպքում, երբ խիստ հրատապության պատճառով մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի սովորական ժամկետները չեն կարող պահպանվել, Հանձնաժողովը պետք է կարողանա կիրառել 1999/468/ԵՀ որոշման 5ա(6) հոդվածով նախատեսված հրատապության ընթացակարգը, որպեսզի ընդունի փոփոխություններ այն նյութերի ցանկում, որոնց շուկայահանումը կամ կենդանիների սնուցման նպատակով

օգտագործումը սահմանափակված կամ արգելված է:

39) Թիվ 1831/2003 կանոնակարգի (ԵՀ) 16-րդ հոդվածով սահմանվում է սննդային հավելումների և պրեմիքսների պիտակավորումն ու փաթեթավորումը: Պրեմիքսների վերաբերյալ կանոնների կիրառումը ոլորտի և իրավասու մարմինների համար մասնավորապես, առաջացրել է գործնական խնդիրներ: Պրեմիքսների ավելի հետետողական պիտակավորում թույլ տալու համար այդ հոդվածը պետք է փոփոխվի:

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԳԼՈՒԽ 1

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Նպատակը

Սույն Կանոնակարգի նպատակն է, համաձայն թիվ 178/2002 (ԵՀ) կանոնակարգով սահմանված ընդհանուր սկզբունքների, ներդաշնակեցնել անասնակերի շուկայահանման և օգտագործման պայմանները՝ կերի անվտանգության և, հետեաբար, հանրային առողջության ավելի բարձր նպատակ ապահովելու, ինչպես նաև օգտագործողներին ու սպառողներին համապատասխան տեղեկություններ տրամադրելու և ներքին շուկայի արդյունավետ գործունեությունն ամրապնդելու համար:

Հոդված 2

Գործողության շրջանակը

1. Սույն Կանոնակարգով Համայնքում սահմանվում են թե սննդամթերքի համար օգտագործվող, և թե սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների կերի շուկայահանման և օգտագործման կանոնները՝ ներառյալ պիտակավորելու փաթեթավորելու և ներկայացնելու վերաբերյալ պահանջները:

2. Սույն Կանոնակարգը կիրառվում է՝ չհակասելով կենդանիների սնուցման բնագավառում կիրառելի՝ Համայնքի այլ դրույթների, մասնավորապես.

ա) թիվ 90/167/ԵՏՀ հրահանգ,

բ) 2002/32/ԵՀ հրահանգ

գ) Սպունգանման էնցեֆալոպաթիայի որոշակի փոխանցվող ձեւերի կանխարգելման, հսկողության ու վերացման կանոնները սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի մայիսի 22–ի թիվ 999/2001 կանոնակարգ (ԵՀ) (22),

դ) Մարդու կողմից սպառման համար չնախատեսված կենդանական ծագման օժանդակ արտադրանքի վերաբերյալ առողջության հետ կապված կանոնները սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 3–ի թիվ 1774/2002 կանոնակարգը (23),

ե) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 22–ի թիվ 1829/2003 կանոնակարգը (ԵՀ)՝ գենետիկորեն ձեւափոխված սննդամթերքի եւ կերի մասին (գենետիկորեն ձեւափոխված սննդամթերքի եւ կերի մասին

գ) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 22–ի թիվ 1830/2003 կանոնակարգը (ԵՀ) գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմների հետագծելիության եւ պիտակավորման ու գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմներից պատրաստված սննդամթերքի եւ կերի արտադրանքի հետագծելիության մասին(25)

է) Թիվ 1831/2003 կանոնակարգ (ԵՀ), եւ

ը) Խորհրդի 2007 թվականի հունիսի 28–ի թիվ 834/2007 (ԵՀ) կանոնակարգ՝ օրգանական արտադրության եւ օրգանական արտադրանքի պիտակավորման մասին(26)

3. Սույն Կանոնակարգը չի վերաբերում ջրին՝ լինի դա կենդանիների կողմից անմիջականորեն օգտագործվող ջուր կամ կերի բաղադրության մեջ դիտմամբ ներառված: Այն, համենայն դեպս, վերաբերում է ջրի մեջ օգտագործման համար նախատեսված կերին:

Հոդված 3

Սահմանումները

1. Սույն Կանոնակարգի նպատակների համար կիրառվում են հետեւյալ սահմանումները.

ա) «կեր», «անասնակերի ոլորտի ձեռնարկությունե եւ «ջուկայահանում» սահմանումները, ինչպես սահմանված են թիվ 178/2002 կանոնակարգում,

բ) «սննդային հավելում», «պրեմիքս», «մշակման լրացուցիչ միջոցներ», եւ «օրական կերաբաժին» սահմանումները, ինչպես սահմանված է թիվ 1831/2003 կանոնակարգով (ԵՀ), եւ

գ) «հաստատություն» եւ «իրավասու մարմին» սահմանումները, ինչպես սահմանված է թիվ 183/2005 կանոնակարգում (ԵՀ),

2. Կիրառվում են նաեւ հետեւյալ սահմանումները՝

ա) «անասնակերի ոլորտի տնտեսավարող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը պատասխանատու է իրենց կողմից կառավարվող անասնակերի ոլորտի ձեռնարկությունում սույն Կանոնակարգի պահանջների կատարումն ապահովելու համար,

բ) «կենդանիների կերակրում բերանային եղանակով» նշանակում է կերի ներմուծումը կենդանու աղեստամոքսային տրակտ բերանից՝ կենդանու սնուցման կարիքները բավարարելու եւ (կամ) առողջ լինելու չափորոշիչներին համապատասխանող՝ կենդանիների արտադրողունակությունը պահպանելու համար,

գ) «սննդամթերքի համար օգտագործվող կենդանի» նշանակում է ցանկացած կենդանի, որին կերակրում, բուծում կամ պահում են մարդու կողմից սպառման համար նախատեսված սննդամթերքի արտադրության նպատակով՝ ներառյալ այն կենդանիները, որոնք չեն օգտագործվում մարդու կողմից սպառման համար, սակայն պատկանում են այն տեսակին, որը սպառման համար սովորաբար օգտագործվում է Համայնքում,

դ) «սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիներ» նշանակում է կենդանի, որին կերակրում, բուծում կամ պահում են, սակայն որը չի օգտագործվում մարդու կողմից սպառման նպատակով, ինչպիսիք մորթատու կենդանիները, ընտանի կենդանիները եւ լաբորատորիաներում, գազանանոցներում կամ կրկեսներում պահվող կենդանիներն են,

ե) «մորթատու կենդանիներ» նշանակում է սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիներ, որոնք կերակրվում, բուծվում կամ պահվում են մորթու արտադրության համար եւ որոնք չեն օգտագործվում մարդու կողմից սպառման նպատակով,

զ) «ընտանի» կամ «ընտանի կենդանի» նշանակում է սննդամթերքի համար չօգտագործվող կենդանի, որը պատկանում է Համայնքում կերակրվող, բուծվող կամ պահվող, սակայն մարդու կողմից սպառման համար որպես կանոն չօգտագործվող սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների տեսակներին,

է) «կերային նյութեր» նշանակում է բուսական կամ կենդանական ծագմամբ արտադրանք, որի հիմնական նպատակը կենդանիների սնուցման կարիքները բավարարելն է, իրենց բնական տեսքով, թարմ կամ պահածոյացված, եւ դրա արդյունաբերական մշակումից ստացվող արտադրանքը՝ սննդային հավելումներ պարունակող կամ չպարունակող, որոնք նախատեսված են կենդանիներին բերանային եղանակով կերակրման համար նախատեսված կամ, որպես այդպիսին անմիջապես, կամ մշակումից հետո, կամ համակցված կերի պատրաստման մեջ կամ որպես պրեմիքսների հիմք,

ը) «համակցված կեր» նշանակում է առնվազն երկու՝ սննդային հավելումներ պարունակող կամ չպարունակող կերային նյութերի խառնուրդ, կենդանիներին բերանային եղանակով կերակրելու համար լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կամ որպես լրացակեր,

թ) «լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կեր» նշանակում է համակցված անասնակեր, որը դրա բաղադրության պատճառով բավարար է օրական կերաբաժնի համար,

ժ) «լրացակեր» նշանակում է համակցված անասնակեր, որտեղ առկա է որոշակի նյութերի բարձր պարունակություն, սակայն որը դրա բաղադրության պատճառով բավարար է օրական կերաբաժնի համար, միայն մեկ այլ անասնակերի հետ համակցությամբ օգտագործելիս,

ժա) «հանքային կեր» նշանակում է լրացակեր, որը պարունակում է առնվազն 40 % հում մոխիր,

ժբ) «կաթի փոխարինիչ» նշանակում է համակցված կեր, որն օգտագործվում է մատղաշ կենդանիների կերակրման համար չոր տեսքով կամ հեղուկի որոշակի քանակի մեջ լուծված՝ որպես լրացում կամ փոխարինիչ, առաջին կաթին հաջորդող կաթ, կամ այնպիսի մատղաշ կենդանիների կերակրման համար, ինչպիսիք մորթի համար նախատեսված հորթերը, գառները կամ ուլիկներն են,

ժգ) «կրիչ»՝ նյութ, որն օգտագործվում է սննդային հավելումը լուծելու, նոսրացնելու, տարածելու կամ այլապես ֆիզիկապես ձեւափոխելու համար՝ դյուրացնելու համար դրա հետ վարվելը, այն կիրառելը կամ օգտագործելն առանց դրա տեխնոլոգիական գործառույթը փոփոխելու եւ առանց որեւէ տեխնոլոգիական ազդեցության՝ որպես այդպիսին,

ժդ) «սնուցման կոնկրետ նպատակ» նշանակում է այն կենդանիների հատուկ սնուցման կարիքների բավարարում, որոնք ունեն յուրացման, ներծծման կամ նյութափոխանակության

հետ կապված ժամանակավոր կամ անդառնալի անկարողություն , եւ որոնք, հետեւաբար, կարող են օգուտ ստանալ դրանց վիճակին համապատասխանող կեր ընդունելու արդյունքում,

ժե) «որոշակի սննդային նպատակների համար նախատեսված կեր» նշանակում է անասնակեր, որը կարող է բավարարել սնուցման կոնկրետ նպատակ՝ դրա հատուկ բաղադրության կամ արտադրության պատճառով, որով այն հստակ կերպով առանձնանում է սովորական անասնակերից:

Որոշակի սննդային նպատակների համար նախատեսված կերը չի ներառում դեղորայք պարունակող կերային նյութեր 90/167/ԵՏՀ հրահանգի իմաստով,

ժզ) «աղտոտված նյութեր» նշանակում է կեր, որը պարունակում է, ըստ 2002/32/ԵՀ հրահանգով սահմանված ընդունելի մակարդակի, չափից շատ գերազանցող ոչ ցանկալի նյութեր,

ժէ) «պահպանման նվազագույն ժամկետ» նշանակում է շրջան, որի ընթացքում, պահպանման պատշաճ պայմաններում պիտակավորման համար պատասխանատու անձը երաշխավորում է կերի հայտարարված հատկանիշների պահպանումը անասնակերի, որպես ամբողջության համար, կարող է նշված լինել միայն մեկ պահպանման նվազագույն ժամկետ, եւ այն որոշվում է դրա յուրաքանչյուր բաղադրիչի պահպանման նվազագույն ժամկետի հիման վրա,

ժը) «խմբաքանակ» կամ «փաթեթ» նշանակում է ընդհանուր հատկանիշներ՝ ինչպիսիք ծագումը, տեսակը, փաթեթավորման տեսակը, փաթեթավորողը, բեռնառաքողը, կամ պիտակն են՝ ունեցող կերի տարբերակելի քանակ, եւ արտադրական գործընթացի դեպքում՝ միեւնույն գործարանի արտադրանքի միավոր՝ արտադրված արտադրական միասնական պարամետրեր կիրառելով կամ մի շարք այդպիսի միավորներ, որոնք շարունակաբար արտադրվում եւ միասին են պահպանվում,

ժթ) «պիտակավորում» նշանակում է կերին ցանկացած բառ, մանրամասն տեղեկություն, ապրանքային նշան, բրենդային անվանում, պատկեր կամ նշան վերագրելը՝ կերին վերաբերող կամ դրան կից այնպիսի կրիչի վրա, ինչպիսիք փաթեթավորումը, տարան, ծանոթագրությունը, պիտակը, փաստաթուղթը, օղակը, ապրանքանիշը կամ համացանցն են, այդ թվում՝ գովազդի նպատակների համար,

ի) «պիտակ» նշանակում է ցանկացած պիտակ, բրենդ, նշան, պատկեր կամ այլ նկարագրողական նյութ, որը ձեռքով գրված, տպագիր, նախշակադապարով նկարված, նշված, փորագրված, դրոշմված կամ կպցրած է կերի փաթեթավորմանը կամ տարային, եւ

իա) «ներկայացնել» նշանակում է ձեւը, արտաքին տեսքը կամ կերի համար օգտագործվող փաթեթավորման կամ փաթեթավորման նյութերը՝ ի լրացում դրա դասավորությանը եւ դրա ցուցադրման շրջապատին:

ԳԼՈՒԽ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հոդված 4

Անվտանգության եւ շուկայահանման վերաբերյալ պահանջներ

1. Կերը կարող է շուկայահանվել եւ օգտագործվել, եթե.

ա) այն անվտանգ է, եւ

բ) այն ուղղակի բացասական ազդեցություն չունի շրջակա միջավայրի կամ կենդանիների բարեկեցության վրա:

Թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 15-րդ հոդվածով սահմանված պահանջները պետք է, համապատասխան փոփոխություններով, կիրառվեն սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների կերի նկատմամբ:

2. Բացի սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ սահմանված պահանջներից՝ կերը շուկայահանող անասնակերի ոլորտի տնտեսավարողներն ապահովում են, որ անասնակերը.

ա) փչացած չէ, իսկական է, կեղծ չէ, համապատասխանում է դրա նպատակին եւ վաճառքի համար համապատասխան որակ ունի, եւ

բ) պիտակավորված, փաթեթավորված եւ ներկայացված է սույն Կանոնակարգով սահմանված դրույթներին համապատասխան եւ Համայնքի այլ կիրառելի օրենսդրության համաձայն:

Թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 16-րդ հոդվածով սահմանված պահանջները պետք է, համապատասխան փոփոխություններով, կիրառվեն սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների կերի նկատմամբ:

3. Կերը պետք է համապատասխանի սույն Կանոնակարգի I հավելվածով սահմանված խառնուրդների եւ այլ քիմիական որոշիչներին:

Հոդված 5

Անասնակերի ոլորտի ձեռնարկությունների պարտականությունները եւ պարտավորությունները

1. Անասնակերի ոլորտի տնտեսավարողները պետք է կատարեն, համապատասխան փոփոխություններով հանդերձ, թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 18-րդ եւ 20-րդ հոդվածներով ու թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) 4(1) հոդվածով սահմանված պարտականությունները սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների առումով:

2. Կերի պիտակավորման համար պատասխանատու անձը պետք է իրավասու մարմիններին մատչելի դարձնի ցանկացած տեղեկություն այդ անձի կողմից շուկայահանված անասնակերի բաղադրության կամ հայտարարված հատկանիշների վերաբերյալ, ինչը թույլ է տալիս ստուգել պիտակավորման տեղեկությունների ճշգրտությունը՝ ներառյալ համակցված կերում օգտագործված կերային նյութերի՝ ըստ կշռի սոկոսները:

3. Մարդկանց կամ կենդանիների կամ շրջակա միջավայրի հետ կապված արտակարգ իրավիճակի դեպքում, եւ առանց 2004/48/ԵՀ հրահանգի դրույթներին հակասելու, իրավասու մարմինը կարող է գնորդին տրամադրել տեղեկություններ, որոնք այն ունի՝ համաձայն սույն Հոդվածի 2-րդ պարբերության՝ պայմանով, որ արտադրողների եւ գնորդների համապատասխան օրինական շահերը հավասարակշռելուց հետո, այդ մարմինը գալիս է այն եզրակացության, որ այդպիսի տեղեկությունների տրամադրումը հիմնավորված է:

Համապատասխան դեպքում, իրավասու մարմինն այդպիսի տեղեկություններ է տրամադրում՝ պայմանով, որ գնորդը ստորագրի գաղտնիության մասին վերապահություն:

Հոդված 6

Գործողության ոլորտն ու արգելքը

1. Կերը չպետք է պարունակի կամ բաղկացած լինի այնպիսի նյութերից, որոնց շուկայահանումը կամ կենդանիների սնուցման նպատակով օգտագործումը սահմանափակ կամ արգելված է:

Այդպիսի նյութերի ցանկը ներկայացված է III հավելվածում:

2. Հանձնաժողովը պետք է փոփոխի այն նյութերի ցանկը, որոնց շուկայահանումը կամ կենդանիների սնուցման նպատակով օգտագործումը սահմանափակ է՝ հաշվի առնելով, մասնավորապես գիտական ապացույցները, տեխնոլոգիայի բնագավառում զարգացումները, Սննդամթերքի եւ կերի արագ ահազանգի համակարգի (ՍԱՔԱԱՀ) ծանուցումները եւ թիվ 882/2004 կանոնակարգի (ԵՀ) համաձայն, պաշտոնական հսկողության արդյունքները:

Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 28(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Իսիստ հրատապության դեպքում Հանձնաժողովը կարող է կիրառել 28(5) հոդվածում նշված հրատապության ընթացակարգը՝ այդ միջոցներն ընդունելու նպատակով:

ԳԼՈՒԽ 3

ԿԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԱՀԱՆՈՒՄ

Հոդված 7

Կերի տեսակների հատկանիշները

1. Համաձայն 28(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի, Հանձնաժողովը կարող է ընդունել կերային նյութերի, սննդային հավելումների եւ այլ արտադրանքի միջեւ՝ ինչպիսիք անասնաբուժական դեղամիջոցների տարբերակումը պարզաբանող ուղեցույցներն են:

2. Հանձնաժողովը, կարող է, անհրաժեշտության դեպքում, ընդունել միջոցներ՝ պարզելու համար, արդյոք որոշակի արտադրանքը կեր է՝ սույն Կանոնակարգի նպատակներից ելնելով: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 28(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 8

Սննդային հավելումների բաղադրությունը

1. Համապատասխան սննդային հավելումը թույլատրող համապատասխան իրավական ակտով նախատեսված օգտագործման պայմաններին չհակասելով՝ կերային նյութերը եւ լրացակերը չպետք է պարունակեն լիարժեք օրական կերաբաժին ապահովող անասնակերում համապատասխան ֆիքսված քանակը 100 անգամից ավելի գերազանցող քանակությամբ կերային հավելումներ, լիարժեք օրական կերաբաժինն ապահովող անասնակերում կամ հինգ անգամ ավելի շատ՝ կոկցիդիոստատների եւ հիստոմոնոստատների դեպքում:

2. Առաջին պարբերության մեջ նշված համապատասխան Ֆիքսված առավելագույն քանակը 100 անգամով մեծ մակարդակը լիարժեք օրական կերաբաժինն ապահովող անասնակերում կարող է գերազանցվել միայն այն դեպքում, եթե համապատասխան արտադրանքի բաղադրությունը համապատասխանում է սնուցման կոնկրետ նպատակին՝ սույն Կանոնակարգի 10-րդ հոդվածի համաձայն համապատասխան նպատակային օգտագործման առումով:

Հետեւաբար, այդպիսի կերի օգտագործման պայմանները պետք է մանրամասնորեն նշվեն նպատակային օգտագործման դեպքերի ցանկում:

Թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) IV հավելվածի 2-րդ գլխում նշված սննդային հավելումների օգտագործմամբ այդպիսի կերն արտադրողի հսկողության տակ գտնվող հաստատությունները պետք է հաստատված լինեն՝ այդ կանոնակարգի 10-րդ հոդվածի 1 (բ) կետին համապատասխան:

Հոդված 9

Որոշակի սննդային նպատակների համար նախատեսվող կերի շուկայահանում

Որոշակի սննդային նպատակների համար նախատեսվող կերը կարող է որպես այդպիսին շուկայահանվել միայն այն դեպքում, եթե դրա նպատակային օգտագործումը ներառված է համաձայն 10-րդ հոդվածի կազմված նախատեսված օգտագործման դեպքերի ցանկում, եւ եթե այն համապատասխանում է այդ ցանկում ներկայացված սնուցման կոնկրետ նպատակի հիմնական սննդային հատկանիշներին:

Հոդված 10

Որոշակի սննդային նպատակների համար նախատեսված կերի նպատակային օգտագործման դեպքերի ցանկ

1. Հանձնաժողովը կարող է թարմացնել 2008/38/ԵՀ կանոնակարգում ներկայացված՝ նպատակային օգտագործման համար նախատեսված դեպքերի ցանկը՝ ավելացնելով նպատակային նշանակություն ունեցող օգտագործման դեպք, հեռացնելով այն, կամ ավելացնելով, հեռացնելով կամ փոփոխելով նպատակային նշանակության օգտագործման կոնկրետ դեպքի հետ կապված պայմանները:

2. Նպատակային օգտագործման համար նախատեսված դեպքերի ցանկը թարմացնելու ընթացակարգը կարող է մեկնարկել՝ Հանձնաժողովին Համայնքում կամ անդամ պետությունում հաստատված ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից դիմումը ներկայացնելու միջոցով:

Վավեր դիմումը պետք է ներառի այնպիսի փաթեթ, որով բացահայտվում է, որ կերի կոնկրետ բաղադրությունը համապատասխանում է նախատեսված՝ կոնկրետ սնուցման նպատակին, եւ որ այն բացասական ազդեցություններ չունի կենդանիների առողջության, մարդու առողջության, շրջակա միջավայրի կամ կենդանիների բարեկեցության վրա:

3. Հանձնաժողովը պետք է դիմումը՝ ներառյալ փաթեթը, անհապաղ մատչելի դարձնի այլ անդամ պետությունների համար:

4. Եթե առկա գիտական եւ տեխնոլոգիական տեղեկությունների հիման վրա Հանձնաժողովը պատճառ ունի կարծելու, որ կոնկրետ կերի օգտագործումը կարող է չհամապատասխանել սնուցման կոնկրետ նախատեսված նպատակին, կամ կարող է բացասական ազդեցություն ունենալ կենդանիների առողջության, մարդու առողջության, շրջակա միջավայրի կամ կենդանիների բարեկեցության վրա, Հանձնաժողովը պետք է վավեր դիմումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում դիմի Սննդամթերքի անվտանգության հարցերով եվրոպական մարմին (այսուհետ՝ Մարմին»)՝ եզրակացությունն ստանալու համար:

Մարմինը պետք է եզրակացությունը տրամադրի դիմումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում:

Այս ժամկետը պետք է երկարաձգվի, այն դեպքում, երբ Մարմինը դիմորդին խնդրում է լրացուցիչ տեղեկություններ տրամադրել:

5. Վավեր դիմումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում, կամ, համապատասխան դեպքում, Մարմնի եզրակացությունն ստանալուց հետո Հանձնաժողովը պետք է ընդունի նպատակային օգտագործման համար նախատեսված դեպքերի ցանկը թարմացնող կանոնակարգ, եթե բավարարվում են 2-րդ պարբերության մեջ ներկայացված պայմանները:

Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 28(6) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

6. Շեղում կատարելով 5-րդ պարբերությունից՝ վավեր դիմումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում, կամ համապատասխան դեպքում, Մարմնի եզրակացությունն ստանալուց հետո Հանձնաժողովը պետք է ավարտի ընթացակարգը եւ որոշի չչարունակել թարմացումը ընթացակարգի ցանկացած փուլում, եթե այն համարում է, որ այդպիսի թարմացումը հիմնավորված չէ:

Հանձնաժողովն այն անում է 28(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

Հանձնաժողովն այդպիսի դեպքերում անմիջապես դիմորդին եւ անդամներին տեղյակ է պահում՝ իր նամակում նշելով հիմնավորված թարմացումը չդիտարկելու պատճառները:

7. Հանձնաժողովը կարող է, համաձայն 28(3) հոդվածում նշված կարգավորիչ հրահանգի, կիրարկող միջոցներ ընդունել դիմումը կազմելու եւ ներկայացնելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 4

ՊԻՏԱԿԱՎՈՐԵԼԸ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ՓԱԹԵԹԱՎՈՐԵԼԸ

Հոդված 11

Պիտակավորելու եւ ներկայացնելու սկզբունքներ

1. Կերը պիտակավորելը եւ ներկայացնելը չպետք է թյուրիմացության մեջ գցի օգտագործողին, մասնավորապես.

ա) կերի նպատակային օգտագործման կամ հատկանիշների, կերի բնույթի, արտադրության մեթոդի, հատկանիշների, բաղադրության, քանակի, պահպանման ժամկետի, կենդանիների այն տեսակների կամ կատեգորիաների վերաբերյալ, որոնց համար նախատեսվում է անասնակերը,

բ) կերին վերագրելով ազդեցություններ կամ հատկանիշներ, որն այն չունի կամ ակնարկելով, որ այն հատուկ հատկանիշներ ունի, երբ իրականում բոլոր նմանատիպ անասնակերերն այդպիսի հատկանիշներ ունեն, կամ

գ) պիտակավորման՝ 24-րդ եւ 25-րդ հոդվածներում նշված Համայնքի կատալոգին եւ Համայնքի կանոններին համապատասխանության առումով:

2. Մեծ խմբաքանակներով կամ հերմետիկորեն ոչ փակ փաթեթներում կամ տարաներում շուկայահանվող կերային նյութերը կամ համակցված կերին պետք է, համաձայն 23(3) հոդվածի, կից լինեն սույն Կանոնակարգով պահանջվող պիտակավորման բոլոր պարտադիր մանրամասն տեղեկությունները:

3. Այն դեպքում, երբ կերը հեռահար հաղորդակցության միջոցով հանվում է վաճառքի, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1997 թվականի մայիսի 20-ի 97/7/ԵՀ՝ «Հեռահար համաձայնագրերի հետ կապված սպառողների պաշտպանության մասին» հրահանգի 2-րդ հոդվածով (27) սույն Կանոնակարգով պահանջվող պիտակավորման պարտադիր մանրամասն տեղեկությունները, բացառությամբ 15(բ), (դ), (ե), եւ 16(2)(գ) կամ 17(1)(դ) հոդվածներով նախատեսված մանրամասն տեղեկությունների,

պետք է նշված լինեն հեռահար վաճառքի հիմքում ընկած փաստաթղթում, կամ դրանք պետք է տրամադրվեն այլ համապատասխան միջոցների օգնությամբ՝ մինչեւ հեռահար համաձայնագրի կնքումը:

15(բ), (դ), (ե), եւ 16(2)(գ) կամ 17(1)(դ) կետերում նշված մանրամասն տեղեկությունները պետք է տրամադրվեն ամենաուշը կերի մատակարարման ժամանակ:

4. Պիտակավորման վերաբերյալ լրացուցիչ դրույթները՝ սույն Գլխում ներկայացված դրույթներից բացի, ներկայացված են II հավելվածում:

5. Կերային նյութի կամ համակցված կերի պիտակի վրա նշված բաղադրության արժեքների եւ, համաձայն թիվ 882/2004 կանոնակարգի (ԵՀ), պաշտոնական հսկողությամբ վերլուծվող արժեքների միջեւ թույլատրելի շեղումները ներկայացված են սույն Կանոնակարգի IV հավելվածում:

Հոդված 12

Պատասխանատվություն

1. Պիտակավորման համար պատասխանատու անձը պետք է ապահովի պիտակավորման մանրամասն տեղեկությունների առկայությունը եւ էական ճշգրտությունը:

2. Պիտակավորման համար պատասխանատու անձը պետք է լինի անասնակերի ոլորտի տնտեսավարող, որն առաջինն է շուկայահանում անասնակերը, կամ, համապատասխան դեպքում, անասնակերի ոլորտի այն ձեռնարկատերը, ում անվան կամ ձեռնարկության անվան տակ է շուկայահանվում անասնակերը:

3. Այն աստիճանի, որ նրանց գործունեությունն ազդում է նրանց կողմից կառավարվող ձեռնարկության պիտակավորման վրա, անասնակերի ոլորտի տնտեսավարողները պետք է ապահովեն, որ ցանկացած կրիչի միջոցով տրամադրվող տեղեկատվությունը բավարարի սույն Կանոնակարգի պահանջները:

4. Մանրածախ առետրի կամ բաշխման գործունեության համար պատասխանատու անասնակերի ոլորտի տնտեսավարողները պետք է գործեն՝ պատշաճ ուշադրություն դարձնելով պիտակավորման պահանջներին համապատասխանության ապահովելն աջակցելուն՝ մասնավորապես խուսափելով այնպիսի անասնակերի մատակարարումից, որը, ըստ նրանց մոտ եղած տեղեկությունների կամ որը նրանք պետք է ենթադրեն, որ

նրանց տրամադրության տակ եղած տեղեկությունների հիման վրա եւ, որպես մասնագետներ, չի համապատասխանում այդ պահանջներին:

5. Իրենց գործունեության շրջանակներում եւ վերահսկողության ներքո կառավարվող ձեռնարկությունում անասնակերի ոլորտի տնտեսավարողները պետք է ապահովեն պիտակավորման պարտադիր մանրամասն տվյալների փոխանցումը սննդի ամբողջ շղթայով՝ թույլ տալու համար, սույն Կանոնակարգի համաձայն, անասնակերի վերջնական սպառողին տեղեկությունների տրամադրումը:

Հոդված 13

Դիմումներ

1. Կերային նյութերն ու համակցված կերը պիտակավորելու եւ ներկայացնելու միջոցով կարող է հատուկ ուշադրություն դարձվել կերում որեւէ նյութի առկայությանը կամ բացակայությանը, սնուցման հատուկ հատկանիշներին կամ գործընթացին կամ դրանցից որեւէ մեկի հետ կապված կոնկրետ գործառույթին՝ պայմանով, որ բավարարվում են հետեւյալ պայմանները.

ա) դիմումն օբյեկտիվ է, ստուգելի է իրավասու մարմինների կողմից ու հասկանալի է կերն օգտագործողի համար, եւ

բ) պիտակավորման համար պատասխանատու անձն իրավասու մարմնի պահանջով ներկայացնում է դիմումի գիտական հիմնավորում՝ կամ հղում կատարելով հանրային աղբյուրներում մատչելի գիտական ապացույցներին կամ ընկերության փաստաթղթավորված հետազոտություններին:

Գիտական հիմնավորումը պետք է առկա լինի կերի շուկայահանման ժամանակ:

Գնորդները պետք է իրավունք ունենան իրավասու մարմնի ուշադրությունը հրավիրելու դիմումի ճիշտ լինելու վերաբերյալ:

Եթե առկա է եզրակացություն, որ դիմումը բավարար չափով հիմնավորված չէ, ապա այդ դիմումի հետ կապված պիտակավորումը պետք է համարվի թյուրիմացություն առաջացնող՝ համաձայն 11-րդ հոդվածի:

Այն դեպքում, երբ իրավասու մարմինը կասկածներ ունի համապատասխան դիմումի գիտական հիմնավորման վերաբերյալ, կարող է այդ հարցը բարձրացնել Հանձնաժողովում:

Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել, Մարմնից եզրակացությունն ստանալուց հետո համապատասխան դեպքերի մասին՝ համաձայն 28 (2) հոդվածով սահմանված խորհրդատվական ընթացակարգի,

2. Չհակասելով 1-ին պարբերությանը՝ սնուցման օպտիմալացման եւ ֆիզիոլոգիական վիճակների պահպանման կամ պաշտպանության վերաբերյալ դիմումները թույլատրվում են, եթե դրանք չեն պարունակում 3(ա)պարբերությունում նշված դիմումի տեսակ,

3. Կերային նյութերը պիտակավորելը կամ ներկայացնելը չպետք է պարունակի պնդում, որ.

ա) այն կկանխարգելի, կբժշկի կամ կբուժի հիվանդություն՝ բացառությամբ կոկցիդիոստատների եւ հիստոմոնոստատների՝ ինչպես թույլատրված է թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգով, այնուամենայնիվ, սույն կետը չի վերաբերում սննդանյութերի դիսբալանսների վերաբերյալ դիմումներին՝ պայմանով, որ դրանց հետ կապված պաթոլոգիական ախտանիշ առկա չէ:

բ) այն ունի սնուցման կոնկրետ նպատակ, ինչպես նշվում է նպատակային օգտագործման դեպքերի ցանկում՝ 9-րդ հոդվածի համաձայն, բացառությամբ այն դեպքի, երբ այն բավարարում է այնտեղ ներկայացված պահանջները:

4. Առաջին եւ երկրորդ պարբերություններում ներկայացված պահանջների հատկորոշումները կարող են ներառվել 25-րդ հոդվածում նշված Համայնքի կանոններում:

Հոդված 14

Պիտակավորման մասին մանրամասն տեղեկությունները ներկայացնելը

1. Պիտակավորման պարտադիր մանրամասն տեղեկությունները պետք է ամբողջությամբ ներկայացվեն փաթեթավորման, տարայի կամ դրան փակցված պիտակի երեսացող տեղում կամ 11(2) հոդվածով նախատեսված կից փաստաթղթում՝ արտահայտված հստակ, պարզ ընթեռնելի եւ չճշվող կերպով, անդամ պետության կամ դրա շուկայահանման շրջանի պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից առնվազն մեկով:

2. Պիտակավորման պարտադիր մանրամասն տեղեկությունները պետք է լինեն դյուրորեն ճանաչելի եւ չպետք է ծածկված լինեն որեւէ այլ տեղեկություններով:

Դրանց գույնը, տպատառը եւ չափսը չպետք է ծածկի կամ շեշտի տեղեկությունների որեւէ մասը, եթե այդպիսի տարատեսականությունը նախատեսված չէ ուշադրությունը նախագուշական միջոցներին հրավիրելու համար:

3. Առաջին եւ երկրորդ պարբերություններում ներկայացված պահանջների վերաբերյալ հատկորոշումները եւ 22-րդ հոդվածում նշված կամավոր պիտակավորումը ներկայացնելը կարող է ներառվել 25-րդ հոդվածում նշված Համայնքի կանոններում:

Հոդված 15

Պարտադիր պիտակավորման ընդհանուր կանոններ

Կերային նյութը կամ համակցված կերը չպետք է շուկայահանվի, եթե պիտակի մեջ նշված չեն հետեւյալ մանրամասն տեղեկությունները.

ա) կերի տեսակը.

«կերային նյութ» «լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կեր» կամ «լրացակեր»,
ինչպես հարկն է,

– «լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կերի» համար կարող է օգտագործվել «կաթին փոխարինող լիարժեք կեր», համապատասխան դեպքում,

–«լրացակերի» համար համապատասխան դեպքում կարող է օգտագործվել հետեւյալ նշումը.

«հանքային կեր» կամ «կաթին փոխարինող լրացուցիչ կեր»,

– բացառությամբ կատուների եւ շների՝ ընտանի կենդանիների համար, «լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կերը» կամ «լրացակերը» կարող է փոխարինվել «համակցված կերով»,

բ) պիտակավորման համար պատասխանատու անասնակերի ոլորտի տնտեսավարողի անունը կամ կազմակերպության անվանումը եւ հասցեն,

գ) առկայության դեպքում, պիտակավորման համար պատասխանատու անձին համաձայն թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) 13-րդ հոդվածի տրված հաստատության հաստատման համարը այն հաստատությունների համար, որոնք հաստատվել են թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) 23(2)(ա), (բ) եւ (գ) հոդվածին կամ թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ)

17-րդ հոդվածին կամ թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) 10-րդ հոդվածին համապատասխան:

Եթե պիտակավորման համար պատասխանատու անձը մի քանի հաստատման համարներ ունի, նա պետք է օգտագործի թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) համաձայն տրված համարը,

դ) խմբաքանակի կամ փաթեթի նույնականացման համարը

ե) զանգվածի միավորներով արտահայտված զուտ քանակը՝ պինդ արտադրանքի դեպքում, եւ զանգվածի միավորներով կամ ծավալով՝ հեղուկ արտադրանքի դեպքում,

զ) սննդային հավելումների ցանկը, որին նախորդում է «հավելումներ» վերնագիրը՝ համաձայն VI կամ VI հավելվածի I գլխի համապատասխան դեպքերում, եւ չհակասելով համապատասխան կերային հավելումը հաստատող իրավական ակտով սահմանված պիտակավորման վերաբերյալ դրույթների, եւ

է) խոնավությունը՝ համաձայն I հավելվածի 6-րդ կետի:

Հոդված 16

Կերային նյութերի համար պիտակավորման հատուկ պարտադիր պահանջներ

1. Ի լրումն 15-րդ հոդվածով նախատեսված պահանջների՝ կերային նյութերի պիտակի մեջ նաեւ պետք է ներառված լինի.

ա) կերային նյութի անվանումը, անվանումը պետք է օգտագործվի 24(5) հոդվածի համաձայն, եւ

բ) համապատասխան հայտարարագրում ըստ համապատասխան կատեգորիայի, ինչպես ներկայացված է V հավելվածի ցուցակում; պարտադիր հայտարարագրումը հնարավոր է փոխարինել համապատասխան կատեգորիայի յուրաքանչյուր կերային նյութի համար Համայնքի կատալոգի 24-րդ հոդվածում նշված մանրամասն տեղեկություններով:

2. Ի լրումն 1-ին պարբերությամբ նախատեսված պայմանների՝ կերային նյութերի պիտակավորումը պետք է ներառի հետեւյալը հավելումներ ընդգրկվելու դեպքում:

ա) կենդանիների տեսակները կամ կատեգորիաները, որոնց համար նախատեսված է կերային նյութը՝ այն դեպքում երբ համապատասխան հավելումները հաստատված չեն

կենդանիների բոլոր տեսակների համար կամ որոշ տեսակների համար հաստատված են վերին սահմաններով,

բ) ճիշտ օգտագործման հրահանգները՝ համաձայն II հավելվածի 4-րդ կետին, այն դեպքում, երբ սահմանվում է համապատասխան հավելումների վերին սահմանը, եւ

գ) տեխնոլոգիական հավելումներ չհանդիսացող հավելումների համար պահպանման նվազագույն ժամկետը,

Հոդված 17

Համակցված կերի համար արտադիր պիտակավորման հատուկ պահանջներ

1. Ի լրումն 15-րդ հոդվածով նախատեսված պահանջների՝ համակցված կերի պիտակի մեջ պետք է ներառված լինի հետեւյալը.

ա) կենդանիների տեսակները կամ կատեգորիաները, որոնց համար նախատեսված է համակցված կերը,

բ) ճիշտ օգտագործման հրահանգներ, որոնցում նշվում է կերի նշանակային նպատակը. այդպիսի հրահանգներում, համապատասխան դեպքերում, պետք է համապատասխանեն II հավելվածի 4-րդ կետին,

գ) այն դեպքերում, երբ արտադրողը պիտակավորման համար պատասխանատու անձը չէ, պետք է նշվի հետեւյալը.

– արտադրողի անվանումը կամ կազմակերպության անվանումը եւ հասցեն, կամ

– արտադրողի հաստատման համարը՝ նշված 15(գ) հոդվածում կամ նույնականացման համարը՝ համաձայն թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) 9-րդ, 23-րդ կամ 24-րդ հոդվածների. եթե այդպիսի համար առկա չէ՝ արտադրողների կամ անասնակերի ոլորտի ներկրող տնտեսավարողի պահանջով տրամադրված նույնականացման համարը, որը պետք է համապատասխանի թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) V հավելվածի II գլխին,

դ) պահպանման նվազագույն ժամկետի նշումը՝ համաձայն հետեւյալ պահանջների.

–«օգտագործել մինչեւ...», որին հետեւում է կոնկրետ օր նշող ամսաթիվ, այն դեպքում, երբ կերը շուտ փչացող է քայքայման գործընթացների պատճառով,

–«պիտանի է օգտագործման մինչեւ...», որին հետեւում է կոնկրետ ամիս նշող ամսաթիվ՝ այլ կերի դեպքում:

Եթե արտադրության ամսաթիվը նշված է պիտակի վրա, ապա պահպանման նվազագույն ժամկետը սահմանող ամսաթիվ նույնպես կարող է նշվել հետեւյալ կերպ «... (ժամկետներ օրերով կամ ամիսներով արտահայտված) արտադրության ամսաթվից հետո»,

ե) կերի բաղադրության մեջ մտնող կերային նյութերի ցանկը, որն ունի «բաղադրություն» վերնագիրը եւ նշում է յուրաքանչյուր կերային նյութի անվանումը՝ համաձայն 16(1)(ա) հոդվածի, եւ թվարկում է այդ կերային նյութերն ըստ զանգվածի նվազման կարգի՝ հաշվարկված համակցված կերում խոնավության պարունակությունը հաշվի առնելով. այդ ցուցակը կարող է ընդգրկել ըստ կշռի տոկոսը, եւ

զ) VI կամ VII հավելվածի II գլխով նախատեսված պարտադիր հայտարարագրերը, համապատասխան դեպքերում,

2. Ինչ վերաբերում է 1(ե) պարբերությունում ներկայացված ցանկին, ապա կիրառվում են հետեւյալ պահանջները.

ա) պետք է նշվի կերային նյութի անվանումը եւ ըստ կշռի տոկոսը, եթե դրա առկայությունը պիտակի վրա շեշտված է բառերի, նկարների կամ գրաֆիկական պատկերների միջոցով,

բ) եթե սննդամթերքի համար օգտագործվող կենդանիների համար համակցված կերում պարունակվող կերային նյութերի՝ ըստ կշռի տոկոսները նշված չեն պիտակի վրա, ապա պիտակավորման համար պատասխանատու անձը պետք է, չհակասելով 2004/48/ԵՀ հրահանգին, գնորդին՝ վերջինիս իսկ պահանջով, հասանելի դարձնի քանակական բաղադրության տվյալները արժեքի +/- 15 % սահմաններում, եւ

զ) սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների՝ բացառությամբ մորթատու կենդանիների համար նախատեսված համակցված կերի դեպքում, կերային նյութի կոնկրետ անվանման նշումը կարող է փոխարինվել կերային նյութերի կատեգորիայի անվանմամբ:

3. Մարդու կամ կենդանիների առողջության կամ շրջակա միջավայրի հետ կապված որեւէ հրատապ դեպքում եւ, չհակասելով 2004/48/ԵՀ հրահանգին, իրավասու մարմինը կարող է գնորդին տրամադրել տեղեկություններ, որոնք առկա են իր մոտ՝ համաձայն 5(2) հոդվածի՝ պայմանով, որ արտադրողների եւ գնորդների համապատասխան օրինական շահերը հավասարակշռի. բերելուց հետո այն եզրակացնում է, որ այդպիսի տեղեկությունների տրամադրումը հիմնավորված է:

Համապատասխան դեպքում, իրավասու մարմինն այդպիսի տեղեկություններ՝ պայմանով, որ գնորդը ստորագրի գաղտնիության մասին վերապահություն:

4. Երկրորդ պարբերության (գ) կետի իմաստով, Հանձնաժողովը կազմում է կերային նյութերի այն կատեգորիաների ցանկը, որոնք առանձին կերային նյութերի փոխարեն կարող են նշվել սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների՝ բացառությամբ մորթատու կենդանիների համար նախատեսված կերի պիտակում:

Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 28(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 18

Որոշակի սննդային նպատակների համար նախատեսված կերի պարտադիր պիտակավորման լրացուցիչ պահանջներ

Ի հավելումն 15-րդ, 16-րդ եւ 17-րդ հոդվածներում ներկայացված ընդհանուր պարտադիր պահանջների՝ համապատասխան դեպքերում որոշակի սննդային նպատակների համար նախատեսված կերի պիտակում պետք է նաեւ ներառված լինեն.

ա) «դիետիկ» որակավորող արտահայտությունը՝ բացառապես որոշակի սննդային նպատակների համար նախատեսված կերի դեպքում, անասնակերի վերաբերյալ նշման կողքին՝ ինչպես սահմանված է 15(ա) հոդվածով,

բ) 9-րդ հոդվածում նշված՝ նպատակային օգտագործման դեպքերի ցանկի 1-6-րդ սյունակներում սահմանված մանրամասն տեղեկությունները, եւ

գ) նշում այն մասին, որ մինչեւ կերն օգտագործելը կամ մինչեւ դրա օգտագործման ժամկետը երկարաձգելը, պետք է իմանալ սնուցման հարցերով փորձագետի կամ անասնաբույժի կարծիքը:

Հոդված 19

Ընտանի կենդանիների կերի պարտադիր պիտակավորման լրացուցիչ պահանջներ

Ընտանի կենդանիների կերի պիտակի վրա պետք է նշված լինի համար՝ անվճար հեռախոսազանգեր կատարելու կամ հաղորդակցման այլ համապատասխան միջոց՝ գնորդին թույլ տալու համար պարտադիր մանրամասն տեղեկություններից բացի, ստանալ տեղեկություններ հետեյալի վերաբերյալ.

ա) ընտանի կենդանիների կերում պարունակվող սննդային հավելումները, եւ

բ) այդտեղ պարունակվող կերային նյութերը, որոնք նշված են ըստ կատեգորիաների՝ ինչպես ներկայացված է 17(2)(գ) հոդվածում:

Հոդված 20

Չհամապատասխանող կերի պարտադիր պիտակավորման լրացուցիչ պահանջները

1. Ի լրումն 15-րդ, 16-րդ, 17-րդ եւ 18-րդ հոդվածներով սահմանված պահանջների՝ VIII հավելվածում ներկայացված Համայնքի իրավունքի պահանջներին չհամապատասխանող կերը, ինչպիսիք աղտոտված նյութերն են, պետք է կրի այդ հավելվածում սահմանված՝ պիտակավորման մանրամասն տեղեկություններ

2. Հանձնաժողովը կարող է փոփոխել VIII հավելվածը՝ այն չափանիշների պատրաստմանն ուղղված օրենսդրական առաջընթացին համապատասխանեցնելու համար:

Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 28(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 21

Շեղումները

1. 15(գ), (դ), (ե), եւ (է) հոդվածում ու 16(1)(բ) հոդվածում նշված մանրամասն տեղեկությունները պարտադիր չեն այն դեպքում, երբ, յուրաքանչյուր գործարքից առաջ, գնորդը գրավոր հայտարարել է, որ նա չի պահանջում սույն տեղեկությունը:

Գործարքը կարող է բաղկացած լինել մի քանի բեռնառաքումներից:

2. 15(գ), (դ) եւ (ե) հոդվածում ու 16(2)(գ) հոդվածում կամ 17(1)(գ), (դ) եւ (ե) հոդվածում նշված փաթեթավորված կերի վրա ներկայացված մանրամասն տեղեկությունները կարող են ներկայացվել փաթեթավորման վրա՝ պիտակի տեղից դուրս, ինչպես նշված է 14(1) հոդվածում:

Այդպիսի դեպքերում պետք է ընդգծվի, թե որտեղ պետք է տեղադրվեն այդ մանրամասն տեղեկությունները :

3. Չհակասելով թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածին՝ 15-րդ հոդվածի (գ), (դ), (ե) եւ (ժ) կետերում ու 16(1)(բ) հոդվածում նշված մանրամասն տեղեկությունները պարտադիր չեն սննդային հավելումներ չպարունակող կերային նյութերի համար՝ բացառությամբ պահածոյացնող նյութերի կամ սիլոսի պահածոյացնող հավելումների, եւ որոնք արտադրվում ու անասնակերի ոլորտի տնտեսավարողի կողմից, համաձայն թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) 5(1) հոդվածի, մատակարարվում են սկզբնական արտադրությամբ զբաղվող՝ կեր օգտագործողին՝ նրա սեփական ձեռնարկությունում օգտագործման համար:

4. 17(1)(գ) հոդվածում նշված պարտադիր հայտարարագրերը պարտադիր չեն բույսերի ամբողջական հատիկների, սերմերի եւ պտուղների խառնուրդների համար

5. Երեքից ոչ ավելի կերային նյութերից բաղկացած համակցված կերի դեպքում 17(1)(ա) եւ (բ) հոդվածում նշված մանրամասն տեղեկությունները պարտադիր չեն այն դեպքում, երբ օգտագործված կերային նյութերը հստակորեն նշված են նկարագրության մեջ:

6. Վերջնական օգտագործողի համար նախատեսված կամ մեծածախ վաճառվող 20 կիլոգրամը չգերազանցող՝ կերային նյութերը կամ համակցված կերի համար, գնորդի ուշադրությունը կարող է հրավիրվել 15-րդ, 16-րդ եւ 17-րդ հոդվածներում նշված մանրամասն տեղեկություններին՝ վաճառքի պահին համապատասխան ծանուցման միջոցով:

Այդպիսի դեպքերում, 15(ա) եւ 16(1) հոդվածում կամ 17(1)(ա) եւ (բ) հոդվածում նշված մանրամասն տեղեկությունները, համապատասխան դեպքերում, պետք է տրամադրվեն գնորդին ամենաուշը հաշիվ-ապրանքագրի մեջ կամ դրա հետ:

7. Մի քանի տարաներ պարունակող փաթեթներում վաճառվող ընտանի կենդանիների կերի քանակների համար, 15(բ), (գ), (դ) եւ (ե) ու 17(1)(բ), (գ), (ե) եւ (զ) հոդվածներում նշված մանրամասն տեղեկությունները կարող են ներկայացվել միայն արտաքին փաթեթավորման

վրա՝ յուրաքանչյուր տարայի փոխարեն՝ պայմանով, որ փաթեթի գումարային ընդհանուր քաշը չի գերազանցում 10 կիլոգրամը:

8. Շեղում կատարելով սույն Կանոնակարգի դրույթներից՝ անդամ պետությունները գիտական կամ փորձարարական նպատակների համար պահվող կենդանիների համար կարող են կիրառել ազգային դրույթներ՝ պայմանով, որ այդպիսի նպատակը հստակորեն նշված է պիտակում: Անդամ պետություններն այդ դրույթների մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

Հոդված 22

Կամավոր պիտակավորում

1. Ի լրումն պարտադիր պիտակավորման պահանջների՝ կերային նյութերի եւ համակցված կերերի պիտակավորումը նաեւ կարող է ներառել կամավոր պիտակավորման մանրամասն տեղեկություններ՝ պայմանով, որ պահպանվեն սույն Կանոնակարգով սահմանված ընդհանուր սկզբունքները:

2. Կամավոր պիտակավորման լրացուցիչ պայմաններ կարող է նախատեսված լինեն 25-րդ հոդվածում նշված Համայնքի կանոններում:

Հոդված 23

Փաթեթավորում

1. Կերային նյութերը եւ համակցված կերը կարող է շուկայահանվել միայն հերմետիկորեն փակ փաթեթներում կամ տարաներում:

Փաթեթները կամ տարաները պետք է հերմետիկորեն փակ լինեն բայց ոչ այնպես, երբ փաթեթը կամ տարան բացվում է, կապարակնիքը վնասվի եւ այն հնարավոր չլինի կրկին օգտագործել:

2. Շեղում կատարելով 1-ին պարբերությունից՝ հետեւյալ կերը կարող է շուկայահանվել մեծածախ քանակներով կամ հերմետիկորեն ոչ փակ փաթեթներով կամ տարաներով.

ա) կերային նյութերը,

բ) համակցված կեր՝ ստացված բացառապես հացահատիկը կամ ամբողջական պտուղները խառնելու միջոցով,

գ) մատակարարումներ համակցված կերի արտադրողների միջև,

դ) համակցված կերի մատակարարումներ արտադրողից անմիջապես կերն օգտագործողին,

ե) մատակարարումներ համակցված կերի արտադրողներից փաթեթավորող ընկերություններին,

զ) 50 կիլոգրամ քաշը չգերազանցող համակցված կերի քանակներ, որոնք նախատեսված են վերջնական սպառողի համար եւ վերցվում են անմիջապես հերմետիկորեն փակ փաթեթից կամ տարայից, եւ

է) բլոկներ կամ քարաղեր

ԳԼՈՒԽ 5

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՏԱԼՈԳ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՇԱՃ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԵՐ

Հոդված 24

Համայնքի կերային նյութերի կատալոգ

1. Համայնքի կերային նյութերի կատալոգը (այսուհետ «Կատալոգ») պետք է կազմվի որպես կերային նյութերի եւ համակցված կերի պիտակավորումը բարելավող գործիք:

Կատալոգը պետք է դյուրացնի արտադրանքի հատկանիշների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը եւ թվարկի կերային նյութերը ոչ սպառիչ եղանակով:

Յուրաքանչյուր կերային նյութի համար այն պետք է ներառի առնվազն հետեւյալ մանրամասն տեղեկությունները.

ա) անվանում,

բ) նույնականացնող համարը,

գ) կերային նյութի նկարագրությունը, այդ թվում՝ տեղեկություններ արտադրական գործընթացի մասին, համապատասխան դեպքերում,

դ) 16(1)(բ) հոդվածի իմաստով՝ պարտադիր հայտարարագրմանը փոխարինող մանրամասն տեղեկություններ, եւ

ե) բառարան՝ տարբեր գործընթացների եւ նշված տեխնիկական արտահայտությունների սահմանումներով :

2. Համայնքի կատալոգի առաջին տարբերակը պետք է ընդունվի ամենաուշը մինչեւ 2010 թվականի մարտի 21-ը՝ համաձայն 28(2) հոդվածում նշված խորհրդատվական ընթացակարգի, եւ դրա հոդվածները պետք է բաղկացած լինեն 96/25/ԵՀ հրահանգի հավելվածի Բ մասից եւ 82/471/ԵՏՀ հրահանգի հավելվածից:

96/25/ԵՀ հրահանգի հավելվածի Ա մասի IV կետը պետք է բառարան հանդիսանա:

3. 26-րդ հոդվածում սահմանված ընթացակարգը պետք է կիրառելի լինի Կատալոգի փոփոխությունների նկատմամբ:

4. Սույն Հոդվածը կիրառվում է՝ չհակասելով 4-րդ հոդվածով սահմանված անվտանգության պահանջներին:

5. Կատալոգի օգտագործումը անասնակերի ոլորտի տնտեսավարողների կողմից ոչ պարտադիր է:

Այնուամենայնիվ, Կատալոգում թվարկված կերային նյութի անվանումը կարող է օգտագործվել միայն այն պայմանով, որ պահպանվում են Կատալոգի բոլոր համապատասխան դրույթները:

6. Այն անձը, որն առաջին անգամ է շուկայահանում Կատալոգում թվարկված կերային նյութը, պետք է անհապաղ դրա օգտագործման մասին ծանուցի 26(1) հոդվածում նշված՝ անասնակերի ոլորտի եվրոպական ձեռնարկատիրական հատվածին:

Անասնակերի ոլորտի եվրոպական ձեռնարկատիրական հատվածի ներկայացուցիչները պետք է համացանցում հրապարակեն այդպիսի ծանուցումների գրանցամատյանը եւ կանոնավորապես թարմացնեն գրանցամատյանը:

Հոդված 25

Համայնքի կանոնագրքեր՝ պատշաճ պիտակավորման վերաբերյալ

1. Հանձնաժողովը պետք է խրախուսի Համայնքի՝ պատշաճ պիտակավորման վերաբերյալ երկու կանոնագրքի (այսուհետ՝ «Կանոնագիրք») պատրաստումը՝ մեկը ընտանի կենդանիների համար եւ մյուսը՝ սննդամթերքի համար օգտագործվող կենդանիների համակցված կերի համար, որը կարող է մորթատու կենդանիների համար համակցված կերի մասին բաժին պարունակել:

2. Կանոնագրքերի նպատակն է բարելավել պիտակավորման պատշաճ լինելը:

Դրանք, մասնավորապես, ընդգրկում են դրույթներ 14-րդ հոդվածով նախատեսված՝ պիտակավորման մանրամասն տեղեկությունները ներկայացնելու, 22-րդ հոդվածով նախատեսված՝ կամավոր պիտակավորման եւ 13-րդ հոդվածով նախատեսված դիմումներն օգտագործելու վերաբերյալ:

3. 26-րդ հոդվածով սահմանված ընթացակարգը կիրառվում է Կանոնագրքերը կազմելու եւ դրանց որեւէ փոփոխության նկատմամբ:

4. Կանոնագրքերի օգտագործումն անասնակերի ոլորտի տնտեսավարողների համար պետք է կամավոր լինի:

Այնուամենայնիվ, ցանկացած տեսակի կանոնագրքերի օգտագործումը կարող է նշվել պիտակի վրա միայն այն պայմանով, որ ապահովվում է համապատասխանությունն այդպիսի Կանոնագրքի բոլոր համապատասխան դրույթներին:

Հոդված 26

Կանոնագրքերի պատրաստումը եւ Համայնքի կատալոգի ու Համայնքի կանոնագրքերի փոփոխությունները

1. Համայնքի կատալոգի փոփոխությունների նախագծերը եւ Կանոնագրքերի նախագծերը, ինչպես նաեւ դրանց փոփոխությունների նախագծերը պետք է պատրաստվեն եւ փոփոխվեն անասնակերի ոլորտի եվրոպական ձեռնարկատիրական հատվածի բոլոր համապատասխան ներկայացուցիչների կողմից.

ա) այլ համապատասխան կողմերի՝ ինչպիսիք կեր օգտագործողներն են, խորհրդակցելով,

բ) անդամ պետությունների իրավասու մարմինների հետ եւ, համապատասխան դեպքերում, Մարմնի հետ համագործակցելով,

գ) հաշվի առնելով Մարմնի կողմից պատրաստված եզրակացություններից եւ գիտական կամ տեխնոլոգիական զարգացումներից ստացված համապատասխան փորձը :

2. Չհակասելով 3-րդ պարբերությանը՝ Հանձնաժողովը պետք է սույն Հոդվածի նպատակների համար հաստատի միջոցներ՝ համաձայն 28(2) հոդվածում նշված խորհրդատվական ընթացակարգի:

3. Պետք է ընդունվեն Համայնքի կատալոգի փոփոխություններ, որոնցով սահմանվում է I հավելվածի 1-ին կետում նշված քիմիական խառնուրդների առավելագույն պարունակությունը կամ I հավելվածի 2-ին կետում նշված բուսաբանական մաքրության մակարդակները կամ I հավելվածի 6-րդ կետում խոնավության մակարդակները կամ 16(1)(բ) հոդվածում նշված պարտադիր հայտարարագրումը փոխարինող մանրամասն տեղեկություններ:

Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն 28(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

4. Սույն հոդվածի ներքո միջոցները կարող են ընդունվել միայն այն պայմանով, որ պահպանվեն հետեւյալ պայմանները.

ա) դրանք պատրաստվել են 1-ին պարբերությանը համապատասխան,

բ) դրանց բովանդակությունը կարող է կիրառվել ամբողջ Համայնքի այն հատվածներում, որոնց դրանք վերաբերում են, եւ

գ) նրանք հարմար են սույն Կարգավորման նպատակներին հասնելու համար:

5. Կատալոգը հրապարակվում է Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրի «L» շարքում:

Կանոնագրքերի վերնագրերը եւ հղումները հրապարակվում են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի «C» շարքում:

ԳԼՈՒԽ 6

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 27

Կիրարկող միջոցներ

1. Հանձնաժողովը կարող է փոփոխել հավելվածները՝ դրանք գիտական եւ տեխնոլոգիական զարգացման առումով հարմարեցնելու համար:

Մասնավորապես՝ լրացումների միջոցով սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն՝ 28(4) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ մյուս միջոցներն ընդունվում են 28(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն, եթե որեւէ այլ բան հատուկ նշված չէ:

Հոդված 28

Կոմիտեի կողմից կիրառվող ընթացակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Սույն պարբերությանը հղում կատարելու դեպքում կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 3-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Սույն պարբերությանը հղում կատարելու դեպքում կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երեք ամիս:

4. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

5. 3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1), (2), (4) եւ (6), ինչպես նաեւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

6. Եթե հղում է արվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) եւ (5)(բ) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5ա(3)(գ) եւ (4)(բ) եւ (ե) հոդվածներով սահմանված ժամկետները սահմանվում են համապատասխանաբար երկու ամիս, մեկ ամիս եւ երկու ամիս:

Հոդված 29

Փոփոխություններ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգում

Թիվ 1831/2003 կանոնակարգի (ԵՀ) 16-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

1. 1-ին պարբերությունը փոփոխել հետեւյալ խմբագրությամբ՝

ա) (դ) կետը փոխարինել հետեւյալ խմբագրությամբ,

դ) համապատասխան դեպքերում, սննդային հավելումը կամ պրեմիքսը շուկայահանող ձեռնարկության հաստատման համարը՝ համաձայն կերի հիգիենան սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի հունվարի 12-ի թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) (28) կամ, համապատասխան դեպքերում, համաձայն 95/69/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածի;

բ) հետեւյալ ենթապարբերությունն ավելացնել 1-ին պարբերության վերջում՝

«Պրեմիքսների դեպքում, (բ), (դ), (ե) եւ (է) կետերը չեն վերաբերում բաղադրության մեջ ներառված սննդային հավելումներին:»,

2. 3-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3.

Ի լրումն 1-ին պարբերության մեջ նշված տեղեկատվության՝ III հավելվածում նշված ֆունկցիոնալ խմբին պատկանող սննդային հավելման կամ III հավելվածում նշված ֆունկցիոնալ խմբին պատկանող հավելում պարունակող պրեմիքսի փաթեթավորման կամ տարայի վրա պետք է լինի այդ հավելվածում նշված՝ պարզ ընթեռնելի եւ չճնշվող տեղեկատվություն, ՝»,

3. 4-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«4.

Պրեմիքսների դեպքում պիտակի վրա պետք է նշված լինի «պրեմիքս» բառը:

Կերային նյութերի դեպքում կրիչները նշվում են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 767/2009 «Կերի շուկայահանման եւ օգտագործման մասին» կանոնակարգի (ԵՀ) 17(1)(ե) հոդվածի համաձայն (29), եւ այն դեպքում, երբ որպես կրիչ օգտագործվում է ջուրը, պետք է նշվի խոնավության պարունակությունը պրեմիքսում:

Որպես ամբողջություն՝ մեկ պրեմիքսի համար կարող է նշվել միայն մեկ պահպանման նվազագույն ժամկետ; այդպիսի նվազագույն պահպանման ժամկետը որոշվում է դրա յուրաքանչյուր բաղադրիչի նվազագույն պահպանման ժամկետի հիման վրա:

Հոդված 30

Ուժը կորցրած ճանաչելը

70/524/ԵՏՀ 16-րդ հոդվածը եւ 79/373/ԵՏՀ, 80/511/ԵՏՀ, 82/471/ԵՏՀ, 83/228/ԵՏՀ, 93/74/ԵՏՀ, 93/113/ԵՀ եւ 96/25/ԵՀ հրահանգերը եւ 2004/217/ԵՀ որոշումը ուժը կորցրած են ճանաչվում սկսած 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Ուժը կորցրած հրահանգներին եւ որոշմանն արված հղումները պետք է դիտվեն որպես սույն Կանոնակարգին արված հղումներ եւ պետք է կարդացվեն IX հավելվածում սահմանված հարաբերակցության աղյուսակի համաձայն:

Հոդված 31

Պատժամիջոցները

Անդամ պետությունները սահմանում են այնպիսի պատժամիջոցներ, որոնք կիրառվում են սույն Կանոնակարգի դրույթների խախտումների դեպքում, եւ ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար այդ պատժամիջոցների իրականացումը:

Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

Անդամ պետությունները ծանուցում են Հանձնաժողովին այս դրույթների մասին ամենաուշը մինչեւ 2010 թվականի սեպտեմբերի 1-ը եւ անհապաղ տեղեկացնում են հետագա ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 32

Անցումային միջոցներ

1. Շեղում կատարելով 33-րդ հոդվածի երկրորդ ենթապարբերությունից՝ մինչեւ 2010 թվականի սեպտեմբերի 1-ը համաձայն 79/373/ԵՏՀ, 82/471/ԵՏՀ, 93/74/ԵՏՀ եւ 96/25/ԵՀ հրահանգների շուկայահանված կամ պիտակավորված կերը կարող է շուկայահանվել կամ մնալ շուկայում մինչեւ պաշարների սպառումը:

2. Շեղում կատարելով 8(2) հոդվածից՝ այդ հոդվածում նշված կերի տեսակները, որոնք արդեն մինչեւ 2010 թվականի սեպտեմբերի 1-ը օրինականորեն են շուկայահանվել, կարող են շուկայահանվել կամ մնալ շուկայում՝ մինչեւ նպատակային օգտագործման դեպքերի ցանկը թարմացնելու վերաբերյալ դիմումի մասին որոշումը կայացվի, ինչպես նշված է 10-րդ հոդվածում՝ պայմանով, որ այդպիսի դիմումը ներկայացվել է մինչեւ 2010 թվականի սեպտեմբերի 1-ը:

3. Շեղում կատարելով սույն Կանոնակարգի I հավելվածից՝ կերային նյութերը կարող են շուկայահանվել եւ օգտագործվել՝ մինչեւ որոշվի դրանց արտադրական գործընթացից եւ մշակման լրացուցիչ միջոցներից առաջացող քիմիական խառնուրդների առավելագույն տեսակարար պարունակությունը՝ պայմանով, որ դրանք համապատասխանում են առնվազն 96/25/ԵՀ կանոնակարգի հավելվածի II բաժնի «Ա» մասի 1-ին կետում ներկայացված պայմաններին:

Այնուամենայնիվ, սույն շեղումը դադարում է կիրառվել 2012 թվականի սեպտեմբերի 1-ին:

4. Դեպի սույն Կանոնակարգի կիրառումը անցումն օժանդակելու համար կարող են ընդունվել միջոցներ:

Մասնավորապես, կարող են նշվել պայմաններ, որոնց ներքո կերը կարող է պիտակավորվել համաձայն սույն Կանոնակարգի՝ մինչև դրա կիրառման ամսաթիվը:

Մասնավորապես, լրացումների միջոցով սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդպիսի միջոցները պետք է ընդունվեն՝ 28(4) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 33

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Կիրառելի է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Այնուամենայնիվ, 31-րդ եւ 32-րդ հոդվածները կիրառվում են սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

ՀԱՎԵԼՎԱԾ I

Խառնուրդների, կաթի փոխարինիչի, կապակցման կամ բնափոխման համար նախատեսված կերային նյութերի, մոխրայնության մակարդակի եւ խոնավության պարունակության վերաբերյալ տեխնիկական դրույթներ, ինչպես նշված է 4-րդ հոդվածում

1. Համաձայն թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) 4-րդ հոդվածի լավագույն փորձի՝ կերային նյութերը չպետք է դրանց արտադրական գործընթացից եւ մշակման լրացուցիչ միջոցներից առաջացող քիմիական խառնուրդներ պարունակեն, եթե տեսակարար առավելագույն պարունակությունը սահմանված չէ 24-րդ հոդվածում նշված Կատալոգում:

2. Կերային նյութերի բուսաբանական մաքրությունը չպետք է 95 %-ից պակաս լինի, եթե 24-րդ հոդվածում նշված Կատալոգում չի սահմանվել այլ մակարդակ:

Բուսաբանական խառնուրդները ներառում են բուսական նյութերի այնպիսի խառնուրդներ, որոնք չունեն կենդանիների վրա բացասական ազդեցություն, օրինակ՝ ծղոտ եւ այլ մշակվող տեսակների կամ մոլախոտերի սերմեր:

Բուսաբանական խառնուրդները, ինչպիսիք նախկին արտադրական գործընթացից ստացված այլ ձիթաբույսերի սերմերը կամ պտուղներն են, չպետք է յուրաքանչյուր տեսակի ձիթաբույսի սերմի կամ պտղի համար գերազանցեն 0,5 %-ը :

3. Յոթանասուն կիլոգրամ կամ պակաս կենդանի քաշ ունեցող հորթերի համար կաթի փոխարինիչ կերում երկաթի մակարդակը պետք է լինի առնվազն 30 միլիգրամ՝ լիարժեք օրական կերաբաժինն ապահովող՝ 12 % խոնավություն ունեցող անասնակերի մեկ կիլոգրամի հաշվարկով:

4. Այն դեպքում, երբ կերային նյութերն օգտագործվում են այլ կերային նյութեր բնափոխելու կամ միացնելու համար, արտադրանք, այնուամենայնիվ, կարող է համարվել կերային նյութ:

Կապակցման կամ բնափոխման համար օգտագործվող կերային նյութերի անվանումը, բնույթը եւ քանակը պետք է նշված լինի պիտակում:

Եթե կերային նյութը կապակցվում է մեկ այլ կերային նյութով, ապա վերջինիս տոկոսը չպետք է գերազանցի ընդհանուր քաշի 3 %-ը:

5. Աղաթթվի մեջ չլուծվող մոխրի մակարդակը չպետք է գերազանցի չոր զանգվածի 2,2 %-ը:

Այնուամենայնիվ, 2,2 %-ի մակարդակը կարելի է գերազանցել հետեւյալի համար.

— կերային նյութեր,

–թույլատրված հանքային կապակցող նյութեր պարունակող համակցված կեր,

–հանքային կեր,

—50 %-ից ավելի բրինձի կամ շաքարի ճակնդեղի օժանդակ արտադրանք պարունակող համակցված կեր,

– 15 %-ից ավելի ձկան ալյուր պարունակող համակցված կեր՝ նախատեսված արհեստականորեն աճեցվող ձկան համար՝

պայմանով, որ այդ մակարդակը նշված լինի պիտակի վրա:

6. Պայմանով, որ 24–րդ հոդվածում նշված Կատալոգում չի նշվում որեւէ այլ մակարդակ, կերի խոնավության պարունակությունը պետք է նշվի, եթե այն գերազանցում է.

–5 %-ը՝ օրգանական նյութեր չպարունակող հանքային կերի դեպքում,

— 7 %-ը՝ կաթնամթերքի ավելի քան 40 % պարունակությամբ կաթի փոխարինիչ կերերում եւ այլ համակցված կերում,

— 10 %՝ օրգանական նյութեր պարունակող հանքային կերի դեպքում,

— 14 %՝ այլ կերի դեպքում:

11(4) հոդվածում նշված՝ պիտակավորման վերաբերյալ ընդհանուր դրույթներ

1. Նշված կամ նշման ենթակա պարունակությունը եւ մակարդակները կապված են կերի քաշի հետ, եթե այլ բան նշված չէ:

2. Ամսաթվերի թվային նշման մեջ պետք է պահպանվի օր, ամիս եւ տարի հերթականությունը եւ ձեւաչափը պետք է նշված լինի պիտակի վրա՝ հետեւյալ հապավման միջոցով.

«OO/ԱԱ/SS»:

3. Որոշ լեզուներով հոմանիշային արտահայտություններ

ա) չեխերենում «krmiva» նշումը կարող է համապատասխան դեպքերում փոխարինվի «produkty ke krmení»–ով. գերմաներենում «Einzelfuttermittel» նշումը կարելի է փոխարինել «Futtermittel-Ausgangserzeugnis» –ով. հունարենում «πρώτη ύλη ζωοτροφών»–ը կարելի է փոխարինել «απλή ζωοτροφή»–ով. իտալերենում «materia prima per mangimi»–ը կարելի է փոխարինել «mangime semplice»–ով,

բ) ընտանի կենդանիների համար կերի նշման մեջ պետք է թույլատրվեն հետեւյալ արտահայտությունները. բուլղարերենում՝ «храна». իսպաներենում՝ «alimento»; չեխերենում՝ «kompletní krmná směs» նշումը կարող է փոխարինվել «kompletní krmivo»–ով եւ «doplňková krmná směs»–ը կարող է փոխարինվել «doplňkové krmivo»–ով, անգլերենում՝ «pet food»; իտալերենում՝ «alimento»; հունգարերենում՝ «állateledel». հոլանդերենում՝ «samengesteld voeder». լեհերենում՝ «karma»; սլովեներենում՝ «hrana za hišne živali»; ֆիններենում՝ «lemmikkieläinten ruoka»:

4. Լրացակերի համար սահմանված առավելագույն մակարդակները գերազանցող հավելումներ պարունակող համակցված կերի եւ կերային նյութերի պատշաճ օգտագործման հրահանգներում պետք է նշված լինի առավելագույն քանակը.

–մեկ կենդանու համար մեկ օրվա հաշվարկով լրացակերի եւ կերային նյութի գրամներով կամ կիլոգրամներով կամ ծավալի միավորներով, կամ

–օրական կերաբաժնի տոկոսով, կամ

- լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կիլոգրամի հաշվարկով կամ լիարժեք օրակերն ապահովող տոկոսով,

ապահովելու համար օրական կերաբաժնում սննդային հավելումների համապատասխան առավելագույն պարունակության պահպանումը:

5. Առանց վերլուծական մեթոդների վրա ազդելու, ընտանի կենդանիների կերի համար «հում սպիտակուց» արտահայտությունը կարող է փոխարինվել «սպիտակուց» արտահայտությամբ, «հում յուղեր եւ ճարպեր» արտահայտությունը կարող է փոխարինվել «ճարպի պարունակությամբ» եւ «հում մոխիր» բառը կարող է փոխարինվել «այրման մնացորդներ» կամ «ոչ օրգանական նյութ» բառերով:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Այն նյութերի ցանկը, որոնց շուկայահանումը կամ կենդանիների սնուցման նպատակով օգտագործումը սահմանափակված կամ արգելված է, ինչպես նշված է 6-րդ հոդվածում:

Գլուխ 1.

Արգելված նյութեր

1. Արտաթորանքը, մեզը, ինչպես նաև մարսողական համակարգից արտազատված պարունակությունը, որն առաջացել է մարսողական համակարգի դատարկումից կամ հեռացումից՝ անկախ մշակման կամ խառնուկի տեսակից:
2. Դաբաղանյութերով մշակված մորթին, այդ թվում՝ դրա մնացուկները:
3. Սերմերը եւ մյուս բազմացման նյութերը, որոնք բերքահավաքից հետո ենթարկվել են հատուկ մշակման՝ բույսերի պահպանման համար նախատեսված նյութերով, ինչպես նաև դրանցից ստացված բոլոր մյուս նյութերը:
4. Փայտը, այդ թվում՝ փայտի թեփը եւ փայտից ստացված մյուս նյութերը, որոնք մշակվել են փայտանյութի համար նախատեսված կոնսերվանտներով, ինչպես սահմանված է Եվրոպական *պառլամենտի* եւ Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի 98/8/ԵՀ՝ բիոցիդային արտադրանքը շուկայահանելու մասին հրահանգի V հավելվածով (30):

▼M1

5. Քաղաքային, ներտնտեսային եւ արտադրական կեղտաջրերի մշակման տարբեր փուլերում ստացվող բոլոր թափոնները, ինչպես սահմանված է քաղաքային կեղտաջրերի մշակմանը վերաբերող՝ Խորհրդի 1991 թվականի մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգի 2-րդ հոդվածով՝ (31) անկախ այդ թափոնների հետագա մշակումից եւ անկախ այդ կեղտաջրերի ծագումից: (32)

6. Քաղաքային կոշտ թափոնները (33), ինչպիսիք կենցաղային թափոններն են :</pt1894>

▼B

7. Գյուղատնտեսական-պարենային ճյուղի արտադրանքի օգտագործումից փաթեթավորում եւ դրա մասերը:

▼M1

8. Սպիտակուցային արտադրանք, որն ստացվել է ն-ալկանների վրա աճեցված Կանդիդա ցեղատեսակի խմորասնկերից:

▼B

Գլուխ 2.

Սահմանափակված նյութեր

▼M2

ՀԱՎԵԼՎԱԾ IV

11(5) հոդվածով նախատեսված կերային նյութերի կամ համակցված կերի բաղադրության պիտակավորման մեջ թույլատրված շեղումները

Մաս Ա՛

I, V, VI եւ VII հավելվածներում ներկայացված անալիզային բաղադրիչների շեղումներ

1. Սույն մասում ներկայացված շեղումները ներառում են տեխնիկական եւ վերլուծական շեղումներ:

Այն ժամանակ, երբ Միության մակարդակով ամրագրվում են չափման անորոշություններ եւ ընթացակարգային տարբերակներ ներառող վերլուծական շեղումները, ապա 2-րդ կետում ներկայացված արժեքները պետք է համապատասխանաբար հարմարեցվեն՝ միայն տեխնիկական շեղումներ ներառելու համար:

2. Երբ հայտնաբերվում է, որ կերային նյութի կամ համակցված կերի բաղադրությունը շեղվում է I, V, VI եւ VII հավելվածներում ներկայացված անալիզային բաղադրիչների՝ պիտակում ներկայացված արժեքից, ապա կիրառվում են հետեւյալ շեղումները.

ա) հում յուղի եւ ճարպերի, հում սպիտակուցի եւ հում մոխիրի համար՝

i) 24 % կամ դրանից ավելի հայտարարված պարունակության ընդհանուր զանգվածի կամ ծավալի $\pm 3 \%$,

ii) հայտարարված պարունակության $\pm 12,5 \%$ ՝ 24 % -ից պակաս, սակայն առնվազն 8 % հայտարարված պարունակություն,

iii) ընդհանուր զանգվածի կամ ծավալի $\pm 1 \%$ -ը՝ 8 %-ից պակաս հայտարարված պարունակության համար,

բ) հում թաղանթանյութի, շաքարի եւ օւլայի համար,

i) 20 % կամ դրանից ավելի հայտարարված պարունակության ընդհանուր զանգվածի կամ ծավալի $\pm 3,5 \%$,

ii) հայտարարված պարունակության $\pm 17,5 \%$ ՝ 20 % -ից պակաս, սակայն առնվազն 10 % հայտարարված պարունակություն,

iii) ընդհանուր զանգվածի կամ ծավալի $\pm 1,7\%$ -ը՝ 10% -ից պակաս հայտարարված պարունակության համար,

գ) կալցիումի, աղաթթվի մեջ չլուծվող մոխիր, գումարային ֆոսֆոր, նատրիում, կալիում եւ մագնիում.

i) 5% կամ դրանից ավելի հայտարարված պարունակության ընդհանուր զանգվածի կամ ծավալի $\pm 1\%$,

ii) հայտարարված պարունակության $\pm 20\%$ ՝ 5% -ից պակաս, սակայն առնվազն 1% հայտարարված պարունակություն,

iii) ընդհանուր զանգվածի կամ ծավալի $\pm 0,2\%$ -ը՝ 1% -ից պակաս հայտարարված պարունակության համար,

դ) խոնավության համար.

i) հայտարարված պարունակության $\pm 8\%$ ՝ $12,5\%$ կամ դրանից ավելի հայտարարված պարունակության համար,

ii) ընդհանուր զանգվածի կամ ծավալի $\pm 1\%$ ՝ $12,5\%$ -ից պակաս, սակայն նվազագույնը 5% հայտարարված պարունակության համար,

iii) հայտարարված պարունակության $\pm 20\%$ -ը՝ 5% -ից պակաս սակայն առնվազն 2% հայտարարված պարունակության համար,

iv) ընդհանուր զանգվածի կամ ծավալի $\pm 0,4\%$ տոկոսը՝ 2% -ից պակաս հայտարարված պարունակության համար,

ե) ինչ վերաբերում է էներգետիկ արժեքին եւ սպիտակուցային արժեքին, որի դեպքում ԵՄ մեթոդին կամ կերի շուկայահանման անդամ պետության պաշտոնական ազգային մեթոդին համապատասխան սահմանված շեղում գոյություն չունի, ապա կիրառվում են հետեւյալ շեղումները՝ 5% էներգետիկ արժեքի եւ 10% սպիտակուցային արժեքի համար:

3. Շեղում կատարելով 2(ա) կետից՝ ընտանի կենդանիների կերում հում յուղերի եւ ճարպերի ու հում սպիտակուցի առումով, այն դեպքում, երբ հայտարարված պարունակությունը 16% -ից քիչ է, թույլատրելի շեղումը պետք է լինի ընդհանուր զանգվածի կամ ծավալի 2% -ը:

4. Շեղում կատարելով 2-րդ կետից՝ հում յուղերի եւ ճարպերի, շաքարի, օսլայի, կալցիումի, նատրիումի, կալիումի, մագնեզիումի համար թույլատրելի տատանումը հայտարարված

պարունակությունից մինչև վերին սահմանը, էներգետիկ արժեքը եւ սպիտակուցային արժեքը կարող են մինչև երկու անգամ գերազանցել 2-րդ եւ 3-րդ կետերում ներկայացված շեղումը:

5. Շեղում կատարելով 2-րդ կետից, աղաթթվում ոչ լուծելի եւ խոնավության շեղումները վերաբերում են միայն վերին սահմանին եւ շեղումների ստորին սահման որոշված չէ:

Մաս Բ

I, V, VI եւ VII հավելվածների համաձայն պիտակավորված սննդային հավելումների շեղումներ

1. Սույն մասում սահմանված շեղումները միայն տեխնիկական շեղում են պարունակում:

Նրանք պետք է վերաբերեն սննդային հավելումների ցանկում եւ անալիզային բաղադրիչների ցանկում պարունակվող սննդային հավելումներին:

Ինչ վերաբերում է որպես անալիզային բաղադրիչների թվարկված սննդային հավելումներին, ապա շեղումները պետք է վերաբերեն որպես երաշխավորված քանակ պիտակավորված ընդհանուր թվին՝ կերի նվազագույն պահպանման ժամկետի ավարտին:

Այն դեպքում, երբ սննդային հավելման պարունակությունը կերային նյութում կամ համակցված կերում պակաս է հայտարարված պարունակությունից, ապա կիրառվում են հետեւյալ շեղումները(34):

ա) հայտարարված պարունակության 10 %-ը, եթե հայտարարված պարունակությունը 1000 միավոր կամ ավելի է,

բ) 100 միավոր, եթե հայտարարված պարունակությունը պակաս է 1000 միավորից, բայց ավելի է 500 միավորից,

գ) հայտարարված պարունակության 20 %-ը, եթե հայտարարված պարունակությունը պակաս է 500 միավորից, բայց նվազագույնը 1 միավոր է

դ) 0,2 միավոր, եթե հայտարարված պարունակությունը պակաս է 1 միավորից, սակայն առնվազն 0,5 միավոր է,

ե) հայտարարված պարունակության 40 %-ը, եթե հայտարարված պարունակությունը պակաս է 0,5 միավորից:

2. Այն դեպքում, երբ սննդային հավելումը հաստատող համապատասխան ակտում սահմանվում է կերի մեջ հավելման նվազագույն եւ (կամ) առավելագույն պարունակությունը, 1-ին կետում սահմանված տեխնիկական շեղումները կիրառվում են միայն նվազագույն պարունակությունը գերազանցելու կամ առավելագույն պարունակությունից փոքր լինելու ժամանակ՝ համապատասխան դեպքերում:

3. Քանի դեռ 2-րդ կետում նշված հավելման սահմանված առավելագույն պարունակությունը չի գերազանցվում, հայտարարված պարունակությունը գերազանցող շեղումը կարող է մինչեւ երեք անգամ գերազանցել 1-ին կետում սահմանված շեղումը:

Այնուամենայնիվ, եթե միկրոօրգանիզմների խմբին պատկանող սննդային հավելումների համար այդ սննդային հավելումը հաստատող համապատասխան ակտում սահմանվում է առավելագույն պարունակություն, առավելագույն պարունակությունը պետք է վերին թույլատրելի արժեքը լինի:

▼B

ՀԱՎԵԼՎԱԾ V

Կերային նյութերի պարտադիր հայտարարագրումը, ինչպես նշված է 16(1) (բ) հոդվածում

	Կերային նյութ, որը բաղկացած է	պարտադիր հայտարարագրում
1.	Ֆուրաֆ-անասնակեր եւ կոշտ կերեր	Հում սպիտակուց, եթե > 10 % Հում թաղանթանյութ
2.	Ձավարեղեն	
3.	Ձավարեղենից արտադրանք եւ ենթամթերքներ	Օսլա, եթե > 20 % Հում սպիտակուց, եթե > 10 % Հում յուղեր եւ ճարպեր, եթե > 5 % Հում թաղանթանյութ
4.	Ձիթաբույսերի սերմեր, ձիթաբույսերի պտուղներ	
5.	Ձիթաբույսերի սերմերից, ձիթաբույսերի պտուղներից արտադրանք եւ ենթամթերքներ	Հում սպիտակուց, եթե > 10 % Հում յուղեր եւ ճարպեր, եթե > 5 % Հում թաղանթանյութ
6.	Լոբազգիների սերմեր	
7.	Լոբազգիների սերմերից արտադրանք եւ ենթամթերքներ	Հում սպիտակուց, եթե > 10 % Հում թաղանթանյութ
8.	Արմատապտուղներ, արմատներ	
9.	Արմատապտուղներից եւ արմատներից արտադրանք ու ենթամթերք	Օսլա Հում թաղանթանյութ

		HCl-ում չլուծվող մոխիր, եթե > չոր զանգվածի 3,5 %-ից
10.	Շաքարի ճակնդեղ մշակող արդյունաբերության արտադրանք եւ ենթամթերքներ	Հում թաղանթանյութ, եթե > 15 %-ից Գումարային շաքար՝ հաշվարկված որպես սախարոզ HCl-ում չլուծվող մոխիր, եթե > չոր զանգվածի 3,5 %-ից
11.	Շաքարեղեգ մշակող արդյունաբերության արտադրանք եւ ենթամթերքներ	Հում թաղանթանյութ, եթե > 15 %-ից Գումարային շաքար՝ հաշվարկված որպես սախարոզ
12.	Այլ սերմեր եւ պտուղներ, դրանց արտադրանքը եւ ենթամթերքները՝ բացառությամբ 2-7-րդ կետերում նշվածների	Հում սպիտակուց Հում թաղանթանյութ Հում յուղեր եւ ճարպեր, եթե > 10 %
13.	Այլ բույսեր, նրանց արտադրանքը եւ ենթամթերքներ՝ բացառությամբ 8-11-րդ կետերում նշվածների	Հում սպիտակուց, եթե > 10 % Հում թաղանթանյութ
14.	Կաթնամթերք եւ ենթամթերքներ	Հում սպիտակուց Խոնավություն, եթե > 5 %-ից Լակտոզա, եթե > 10 %-ից
15.	Ցամաքային կենդանիներից արտադրանք եւ ենթամթերքներ	Հում սպիտակուց, եթե > 10 % Հում յուղեր եւ ճարպեր, եթե > 5 % Խոնավություն, եթե > 8 %-ից
16.	Ձուկ, այլ ծովային կենդանիներ, դրանց արտադրանքը եւ ենթամթերքները	Հում սպիտակուց, եթե > 10 % Հում յուղեր եւ ճարպեր, եթե > 5 %

		Խոնավություն, եթե > 8 %-ից
17.	Հանքանյութեր	Կալցիում Նատրիում Ֆոսֆոր Այլ համապատասխան հանքանյութեր
18.	Այլ դրոյթներ	Հում սպիտակուց, եթե > 10 % Հում թաղանթանյութ Հում յուղեր եւ ճարպեր, եթե > 10 % Օսլա, եթե > 30 % Գումարային շաքար՝ որպես սախարոզ, եթե > 10 %-ից HCl-ում չլուծվող մոխիր, եթե > չոր զանգվածի 3,5 % -ից

ՀԱՎԵԼՎԱԾ VI

Պիտակավորման մանրամասն տեղեկություններ՝ սննդամթերքի համար օգտագործվող կենդանիների համար կերային նյութերի եւ համակցված կերի համար

Գլուխ I

Սննդային հավելումների պիտակավորումը, ինչպես նշված է 15(գ) եւ 22(1) հոդվածներում

1. Հետեյալ հավելվածները պետք է թվարկվեն դրանց կոնկրետ անուններով, ինչպես սահմանված է տվյալ սննդային հավելումը հաստատող համապատասխան իրավական ակտով, ավելացված չափը, նույնականացման համարը եւ ֆունկցիոնալ խմբի անվանումը, ինչպես սահմանված է թիվ 1831/2003 կանոնակարգի (ԵՀ) I Հավելվածում կամ այդ կանոնակարգի 6(1) հոդվածում նշված կատեգորիան.

ա) հավելումներ, որտեղ առավելագույն պարունակությունը սահմանվում է ցանկացած թիրախային տեսակի համար:

բ) «զոոտեխնիկական հավելումներ» եւ «կոկկիդիոստատներ եւ հիստոմոնոստատներ» կատեգորիաներին պատկանող հավելումներ,

գ) «սննդային հավելումներ» կատեգորիայի «միզանյութ եւ դրա ածանցյալները» ֆունկցիոնալ խմբին պատկանող հավելումները, ինչպես ներկայացված է թիվ 1831/2003 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածում:

2. Անվանումը, ինչպես սահմանված է տվյալ սննդային հավելումը հաստատող համապատասխան իրավական ակտում եւ սննդային հավելման ավելացված չափը նշվում է, եթե դրա առկայությունը շեշտված է պիտակի վրա բառերով, նկարներով կամ գրաֆիկական պատկերներով:

3. Պիտակավորման համար պատասխանատու անձը պետք է գնորդին, վերջինիս պահանջով, հայտնի առաջին պարբերության մեջ չնշված սննդային հավելումների անվանումները, նույնականացման համարը եւ ֆունկցիոնալ խումբը:

4. Առաջին պարբերության մեջ չնշված սննդային հավելումները կարող են կամավոր նշվել առաջին պարբերության մեջ սահմանված ձեւով կամ մասնակիորեն:

5. կանոնակարգի (ԵՀ) I հավելվածում, կամավոր է պիտակավորվում , ապա պետք է նշվի ավելացվող չափը:

6. Եթե հավելումը պատկանում է երկուսից ավելի ֆունկցիոնալ խմբերի, ապա համապատասխան անասնակերի դեպքում պետք է նշվի դրա հիմնական գործառույթին համապատասխանող ֆունկցիոնալ խումբը կամ կատեգորիան:

Գլուխ II

Անալիզային բաղադրիչների պիտակավորումը, ինչպես նշված է 17(1)(գ) եւ 22(1) հոդվածներում

1. Սննդամթերքի համար օգտագործվող կենդանիների համար համակցված կերի անալիզային բաղադրիչները պետք է պիտակավորվեն հետևյալ կերպ.

Կեր	Անալիզային բաղադրիչներ եւ դրանց մակարդակները	Թիրախային տեսակներ
Լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կեր	–Հում սպիտակուց	Բոլոր տեսակները
	– Հում թաղանթանյութ	Բոլոր տեսակները
	– Հում յուղեր եւ ճարպեր	Բոլոր տեսակները
	–Հում մոխիր	Բոլոր տեսակները
	–Լիզին	Խոզեր եւ ընտանի թռչուններ
	–Մեթիոնին	Խոզեր եւ ընտանի թռչուններ
	–Կալցիում	Բոլոր տեսակները

	– նատրիում	Բոլոր տեսակները
	–Ֆոսֆոր	Բոլոր տեսակները
Լրացակեր. հանքային	–Լիզին	Խոզեր եւ ընտանի թռչուններ
	–Մեթիոնին	Խոզեր եւ ընտանի թռչուններ
	–Կալցիում	Բոլոր տեսակները
	– նատրիում	Բոլոր տեսակները
	–ֆոսֆոր	Բոլոր տեսակները
	–մագնեզիում	Որոճողներ
Լրացակեր. Այլ	–Հում սպիտակուց	Բոլոր տեսակները
	- Հում թաղանթանյութ	Բոլոր տեսակները
	– Հում յուղեր եւ ճարպեր	Բոլոր տեսակները
	–Հում մոխիր	Բոլոր տեսակները
	–Լիզին	Խոզեր եւ ընտանի թռչուններ
	–Մեթիոնին	Խոզեր եւ ընտանի

		թռչուններ
	Կալցիում $\geq 5 \%$	Բոլոր տեսակները
	– նատրիում	Բոլոր տեսակները
	–Ֆոսֆոր $\geq 2 \%$	Բոլոր տեսակները
	Մագնեզիում $\geq 0,5 \%$	Որոճողներ

2. Եթե ամինաթթուները, վիտամինները եւ (կամ) միկրոէլեմենտները նշված են անալիզային բաղադրիչների վերնագրի ներքո, ապա դրանք պետք է հայտարարվեն դրանց գումարային քանակի հետ մեկտեղ:

3. Եթե էներգետիկ եւ (կամ) սպիտակուցային արժեքը նշված է, այդպիսի նշումը պետք է համապատասխանի ԵՀ մեթոդին, առկայության դեպքում կամ համապատասխան պաշտոնական ազգային եղանակով այն անդամ պետությունում, որտեղ շուկայահանվում է կերը, համապատասխան դեպքում:

ՀԱՎԵԼՎԱԾ VII

Սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների համար կերային նյութերի եւ համակցված կերի համար պիտակավորման մանրամասն տվյալներ

Գլուխ I

Սննդային հավելումների պիտակավորումը, ինչպես նշված է 15(գ) եւ 22(1) հոդվածներում

1. Հետեւյալ հավելվածները պետք է թվարկվեն դրանց կոնկրետ անուններով, ինչպես սահմանված է տվյալ սննդային հավելումը հաստատող համապատասխան իրավական ակտով, ` եւ (կամ) նույնականացման համարի, ավելացված չափի եւ ֆունկցիոնալ խմբի անվանման հետ մեկտեղ, ինչպես սահմանված է թիվ 1831/2003 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածով կամ այդ կանոնակարգի 6(1) հոդվածում նշված կատեգորիայով.

ա) հավելումներ, որտեղ առավելագույն պարունակությունը սահմանվում է ցանկացած թիրախային տեսակի համար:

բ) «զոոտեխնիկական հավելումներ» եւ «կոկկիդիոստատներ եւ հիստոմոնոստատներ» կատեգորիաներին պատկանող հավելումներ,

գ) «սննդային հավելումներ» կատեգորիայի «միզանյութ եւ դրա ածանցյալները» ֆունկցիոնալ խմբին պատկանող հավելումները, ինչպես ներկայացված է թիվ 1831/2003 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածում:

2. Շեղում կատարելով 1-ին պարբերությունից՝ «կայունացուցիչներ», «հակաօքսիդիչներ» եւ «ներկանյութեր» ֆունկցիոնալ խմբերին պատկանող հավելումների համար, ինչպես ներկայացված է թիվ 1831/2003 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածում, պետք է նշվի միայն համապատասխան ֆունկցիոնալ խումբը:

Այս դեպքում, 1-ին պարբերությանը համաձայն տեղեկությունները պիտակավորման համար պատասխանատու անձը պետք է հայտնի գնորդին՝ վերջինիս պահանջով:

3. Անվանումը, ինչպես սահմանված է տվյալ կերային հավելումը հաստատող համապատասխան իրավական ակտում եւ սննդային հավելման ավելացված չափը նշվում է, եթե դրա առկայությունը շեշտված է պիտակի վրա բառերով, նկարներով կամ գրաֆիկական պատկերներով:

4. Պիտակավորման համար պատասխանատու անձը պետք է գնորդին, վերջինիս պահանջով, հայտնի առաջին պարբերության մեջ չնշված սննդային հավելումների անվանումները, նույնականացման համարը եւ ֆունկցիոնալ խումբը:

5. Առաջին պարբերության մեջ չնշված սննդային հավելումները կարող են կամավոր նշվել առաջին պարբերության մեջ սահմանված ձեւով կամ մասնակիորեն:

6. Եթե համային կամ սննդային եւ կերային հավելումը, ինչպես նշված է թիվ 1831/2003 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածում, կամավոր է պիտակավորվում, ապա պետք է նշվի ավելացվող չափը:

7. Եթե հավելումը պատկանում է երկուսից ավելի ֆունկցիոնալ խմբերի, ապա համապատասխան կերի դեպքում պետք է նշվի դրա հիմնական գործառույթին համապատասխանող ֆունկցիոնալ խումբը կամ կատեգորիան:

8. Պիտակավորման համար պատասխանատու անձը պետք է իրավասու մարմիններին հասանելի դարձնի այդ անձի կողմից շուկայահանված կերի բաղադրության կամ հայտարարված հատկանիշների վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որը հնարավորություն է տալիս, որպեսզի պիտակի վրա նշված տեղեկությունների ճշգրտությունը՝ ներառյալ բոլոր հավելումների վերաբերյալ ամբողջական տեղեկությունները, ստուգվեն:

Գլուխ II

Անալիզային բաղադրիչների պիտակավորումը, ինչպես նշված է 17(1)(գ) եւ 22(1) հոդվածներում

1. Սննդամթերքի համար չօգտագործվող կենդանիների համար համակցված կերի անալիզային բաղադրիչները պիտակավորվում են հետեւյալ կերպ.

Կեր	Անալիզային բաղադրիչներ	Թիրախային տեսակներ
Լիարժեք օրական կերաբաժինն ապահովող կեր	– Հում սպիտակուց	Կատուներ, շներ եւ մորթատու կենդանիներ
	–Հում թաղանթանյութ	Կատուներ, շներ եւ

		մորթատու կենդանիներ
	– Հում յուղեր եւ ճարպեր	Կատուներ, շներ եւ մորթատու կենդանիներ
	–Հում մոխիր	Կատուներ, շներ եւ մորթատու կենդանիներ
Լրացակեր. հանքային	–Կալցիում	Բոլոր տեսակները
	– նատրիում	Բոլոր տեսակները
	–Ֆոսֆոր	Բոլոր տեսակները
Լրացակեր. Այլ	–Հում սպիտակուց	Կատուներ, շներ եւ մորթատու կենդանիներ
	–Հում թաղանթանյութ	Կատուներ, շներ եւ մորթատու կենդանիներ
	– Հում յուղեր եւ ճարպեր	Կատուներ, շներ եւ մորթատու կենդանիներ
	–Հում մոխիր	Կատուներ, շներ եւ մորթատու կենդանիներ

2. Եթե ամինաթթուները, վիտամինները եւ (կամ) միկրոէլեմենտները նշված են անալիզային բաղադրիչների վերնագրի ներքո, ապա դրանք պետք է դրանց գումարային քանակի հետ մեկտեղ հայտարարվեն:

3. Եթե նշվում է էներգետիկ եւ (կամ) սպիտակուցային արժեքը, ապա այդպիսի նշումը պետք է համապատասխանի ԵՀ մեթոդին, առկայության դեպքում, կամ՝ համաձայն այն անդամ պետության համապատասխան պաշտոնական ազգային մեթոդի, որտեղ շուկայահանվում է կերը՝ առկայության դեպքում:

ՀԱՎԵԼՎԱԾ VIII

Համայնքի իրավունքին համապատասխան՝ անվտանգության եւ շուկայահանման պահանջներին չհամապատասխանող կերի պիտակավորման վերաբերյալ հատուկ դրույթներ, ինչպես նշված է 20(1) հոդվածում

1. Աղտոտված նյութերը պետք է պիտակավորվեն որպես «...չափազանց բարձր քանակ(ներ) պարունակող կեր (ոչ ցանկալի նյութ(ներ))ի նշումը՝ համաձայն 2002/32/ԵՀ հրահանգի I հավելվածի, կարող է որպես անասնակեր օգտագործվել միայն լիազորված հաստատություններում թունազերծումից հետո»:

Այդպիսի հաստատություններին թույլտվության տրամադրումը պետք է իրականացվի համաձայն թիվ 183/2005 կանոնակարգի (ԵՀ) 10(2) կամ (3) հոդվածների:

2. Այն դեպքում, երբ նախատեսվում է աղտոտվածությունը նվազեցնել կամ հեռացնել մաքրման միջոցով, աղտոտված նյութերի պիտակը պետք է պարունակի հետեւյալ լրացումը.

«... չափազանց բարձր մակարդակ(մակարդակներ) պարունակող կեր (ոչ ցանկալի նյութ(ներ))ի նշումը՝ համաձայն 2002/32/ԵՀ հրահանգի I հավելվածի), կարող է որպես անասնակեր օգտագործվել միայն համապատասխան մաքրումից հետո»:

ՀԱՎԵԼՎԱԾ IX

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

79/373/ԵՏՀ հրահանգ	96/25/ԵՀ հրահանգ	80/511/ԵՏՀ (1), 82/471/ԵՏՀ (2), 93/74/ԵՏՀ (3), 93/113 ԵՀ (4) հրահանգներ կամ 2004/217/ԵՀ (5) որոշում	Սույն Կանոնակարգը
—	—	—	Հոդված 1
Հոդված 1	Հոդված 1	(2), (4): Հոդված 1 (3): Հոդված 4	Հոդված 2
Հոդված 2	Հոդված 2	(2), (3): Հոդված 2	Հոդված 3
—	—	—	Հոդված 4(1)
Հոդված 3	Հոդված 3	(3): Հոդված 1(2)	Հոդված 4(2)
	Հոդված 4		Հոդված 4(3)
—	—	—	Հոդված 5(1)
Հոդված 12		(3): Հոդված 10(2)	Հոդված 5(2)
Հոդված 10ա(3)	Հոդված 11(բ)	(2): Հոդված 8	Հոդված 6
—	—	—	Հոդված 7
—	—	—	Հոդված 8
		(3): Հոդված 3	Հոդված 9
		(3): Հոդված 6	Հոդված 10
Հոդված 5(ե)			Հոդված 11(1)
Հոդված 5(2)	Հոդված 5(1)	(2): Հոդված 5(2)	Հոդված 11(2)
—	—	—	Հոդված 11(3)
Հոդված 5(6)	Հոդված 4 եւ 6(4)		Հոդված 11(4)
Հոդված 6	Հոդված 4		Հոդված 11(5)
Հոդված 5(1)	Հոդված 5(1)		Հոդված 12
Հոդված 5(ե)	Հոդված 5(2)	(3): Հոդված 5(6)	Հոդված 13
Հոդված 5(1), Հոդված 11	Հոդված 5(1), Հոդված 9		Հոդված 14
Հոդված 5(1) եւ 5(5)(գ)	Հոդված 5(1)	(4): Հոդված	Հոդված 15

		7(1)Ե 70/524/ԵՏՀ հրահանգ: Հոդված 16	ԵԼ
	Հոդված 5(1)(c), (d) and 7		Հոդված 16
Հոդվածներ 5(1), 5(գ) և 5(դ)			Հոդված 17(1)
—	—	—	Հոդված 17(2)
Հոդված 5(գ) (3)			Հոդված 17(3)
		(3): Հոդվածներ 5(1), (4), (7) and 6(a)	Հոդված 18
—	—	—	Հոդված 19
	Հոդված 8		Հոդված 20
	Հոդված 6(1)(ա)		Հոդված 21(1)
Հոդված 5(5)(դ)			Հոդված 21(2)
	Հոդված 6(3)(ա)		Հոդված 21(3)
Հոդված 5(5)(բ)			Հոդված 21(4)
Հոդված 5(5)(ա)			Հոդված 21(5)
Հոդված 5(2)	Հոդված 5(3), 6(1)(բ)		Հոդված 21(6)
—	—	—	Հոդված 21(7)
Հոդված 14(գ)			Հոդված 21(8)
Հոդված 5(3), 5(գ)(4) and 5(ե)	Հոդված 5(2)		Հոդված 22
Հոդված 4(1)		(1): Հոդված 1	Հոդված 23
—	—	—	Հոդված 24
—	—	—	Հոդված 25
—	—	—	Հոդված 26
Հոդված 10	Հոդված 11		Հոդված 27
Հոդված 13	Հոդված 13	(2): Հոդված 13 and 14 (3): Հոդված 9	Հոդված 28
—	—	—	Հոդված 29
—	—	—	Հոդված 30
—	—	—	Հոդված 31
—	—	—	Հոդված 32
—	—	—	Հոդված 33
Հավելված Մաս Ա (2), (3), (4)	Հավելված Մաս Ա (II), (VI),		Հավելված I

Հավելված Մաս Ա (1) եւ Հոդված 5(6),	Հոդված 6(4)		Հավելված II
		(5): Հավելված	Հավելված III
Հավելված Մաս Ա (5), (6)	Հավելված Մաս Ա (VII)		Հավելված IV
	Հավելված Մաս Գ		Հավելված V
Հավելված Մաս Բ			Հավելված VI
Հավելված Մաս Բ			Հավելված VII

1) ՊՏ C 77, 31.03.2009թ., էջ 84:

2) Եվրոպական պառլամենտի 2005 թվականի փետրվարի 5-ի եզրակացություն (դեռեւս հրապարակված չէ Պաշտոնական տեղեկագրում) եւ Խորհրդի 2009 թվականի հունիսի 22:

3) ՊՏ L 31, 01.02.2002թ., էջ 1

4) ՊՏ L 268, 18.10.2003թ., էջ 29:

5) ՊՏ L 92, 7.04.1990թ., էջ 42

6) ՊՏ L 86, 6.04.1979թ., էջ 30

7) ՊՏ L 237, 22.09.1993թ., էջ 23:

8) ՊՏ L 125, 23.05.1996թ., էջ 35:

9) ՊՏ L 213, 21.07.1982թ., էջ 8:

10) ՊՏ L 126, 13.05.1983թ., էջ 23:

11) ՊՏ L 126, 21.05.1980թ., էջ 14:

12) ՊՏ L 334, 31.12.1993թ., էջ 17:

13) ՊՏ L 270, 14.12.1970թ., էջ 1:

14) ՊՏ L 35, 8.02.2005թ., էջ 1:

15) ՊՏ L 165, 30.04.2004թ., էջ 1:

16) ՊՏ L 67, 05.03.2004թ., էջ 31:

17) ՊՏ L 62, 6.03.2008թ., էջ 9:

18) ՊՏ L 63, 06.03.2002թ., էջ 23:

19) ՊՏ L 157, 30.04.2004թ., էջ 45:

20) ՊՏ L 140, 30.05.2002թ., էջ 10:

21) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

22) ՊՏ L 147, 31.05.2001թ., էջ 1:

23) ՊՏ L 273, 10.10.2002թ., էջ 1

24) ՊՏ L 268, 18.10.2003թ., էջ 1:

25) ՊՏ L 268, 18.10.2003թ., էջ 24:

26) ՊՏ L 189, 20.07.2007թ., էջ 1:

27) ՊՏ L 144, 04.06.1997թ., էջ 19:

28) ՊՏ L 35, 08.02.2005թ., էջ 1:

29) ՊՏ L 229, 01.09.2009թ., էջ 1:

30) ՊՏ L 123, 24.04.1998թ., էջ 1:

31) ՊՏ L 135, 30.05.1991թ., էջ 40:

32) «Կեղտաջուր» եզրույթը չի վերաբերում «արտադրական գործընթացում օգտագործվող ջրին», այն է՝ սննդի կամ կերի արդյունաբերության մեջ կիրառվող՝ անկախ խողովակներից հոսող ջրին. եթե այդ խողովակները ջրատար են, ապա այդ ջուրը կարող է օգտագործվել որպես կեր միայն առողջարար եւ մաքուր լինելու դեպքում, ինչպես սահմանված է «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին» Խորհրդի 1998 թվականի նոյեմբերի 3-ի 98/83/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածով ՊՏ L 330, 05.12.1998թ., էջ 32:

Ձկնարդյունաբերության դեպքում, տվյալ խողովակներ կարող է մատակարարվել նաեւ ծովի մաքուր ջուր, ինչպես սահմանված է «Սննդամթերքի հիգիենայի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 852/2004 կանոնակարգի(ԵՀ) 2-րդ հոդվածով (ՊՏ L 139, 30.04.2004թ., էջ 1):

Արտադրական գործընթացում օգտագործվող ջուրը չի կարելի օգտագործել որպես կեր, եթե այն չի պարունակում սննդանյութեր կամ կերային նյութեր եւ տեխնիկապես պարունակում է

մաքրող նյութեր, ախտահանիչներ կամ կերի արտադրության ոլորտը կարգավորող օրենսդրությամբ չթույլատրվող այլ նյութեր:

33) «Քաղաքային կոշտ թափոն» եզրույթը չի վերաբերում սննդամթերքի արտադրական թափոններին, ինչպես սահմանված է թիվ 1774/2002 կանոնակարգով (ԵՀ):

34) սույն կետում 1 միավորը նշանակում է 1 մգ, 1 000 միջազգային միավոր, 1×10^9 գաղութագոյացնող միավոր կամ 100 ֆերմենտային ակտիվության միավոր համապատասխան սննդային հավելման մեջ՝ կերի մեկ կիլոգրամի հաշվարկով, համապատասխան դեպքերում: